

Ա. ՆԵՐՈՒԹՅԱՆ

2011 - 12

2541

„ԴԱՅՆԱԿՑԱԿԱՆ ԴՐԱԽՏԱԿԱՑՐԸ”

Կ Ա Մ

ՍՊՎԻ ՅԵՎ ՄԱՀՎԱՆ ԱԹԽԱՐՔԸ

2#1

9(47.925)

4-63

ԹԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1932

9(47.925)  
G-63

Ա. ՆԵՐՍԻՆՅԱՆ

“ԴԱՅԱԿՑԱԿԱՆ ԴՐԱԽՏՎԱՎՐԸ”  
Կ Ա Մ  
ՍՈՎԻ ՅԵՎ ՄԱՀՎԱՆ ԱՇԽԱՐԴԸ

ՀՀՀՀ (N 64  
H. N. L. 2.)



22972.599

2541

ԹԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ

ՅԵՐԵՎԱՆ - 10

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դաշնակցության, վորպես հայ բուրժուազիայի մարտական կուսակցության, ամբողջ հակահեղափոխական, Փաշխտական, ծայրակեղ ռեակցիոն եյությունը հստակ կերպով յերևան ե դախուչ վոչ միայն այմժ, յերբ նա, այդ կուսակցությունը բացահայտ կերպով գործում ե Ա.Ս.Հ.Մ.-ի դեմ ինտերվենցիա կազմակերպող ուժերի առաջին շարքերում, յերբ նա զինված յելույթներ ե ունենում (բանդիտիզմի ձեւերով) մեր յերկրում սոցիալիստական հասարակության հոյակապ շենքը հաղթանակութեն կերտող պրոլետարիատի դիկտատորայի դեմ :

Դաշնակցությունը, վորպես հայ բուրժուազիայի Փաշխտական կուսակցությունը, իր իսկական դեմքով և եյությամբ հանդես ե յեկել ու գործել իր գոյության դրեթե քառասնամյա վողջ պատմության շրջանում, սկսած դեռևս իր՝ վորպես կուսակցության կազմավորման առաջին իսկ որերից :

Սակայն դաշնակցությունն իր պատմական գոյության մի քանի տարիներում առանձանապես ցցուն կերպով հանդես բերեց իր բուրժուական, Փաշխտական դեմքն ու եյությունը :

Խոսքը վերաբերում ե Դաշնակցության այլպես կոչված «պետականության շրջանին» (1918—1920 թ.թ.), այսինքն՝ այն տարիներին, յերբ դաշնակցական կուսակցությունն իշխում, տիրապետում էր Հայաստանում, ունենալով իր պետությունը, դիկտատուրան։ Ահա այս տարիներում դաշնակցությունն առանձնապես ցուցաբերեց իր եյությունը մինչև վերջը, ավելի քան պատուլով իր դիմակը։

Եեկ հենց այս շրջանին ել նվիրված և մեր ներկա գրքույկը, վորնպատակ ունի փաստական տվյալներով ցույց տալ ընդհանուր կերպով դաշնակցական կուսակցության բուրժուակային, հակահեղափոխական վարքագիծն ու գործունեյությունը, մասնավորապես՝ բանավորության և աշխատավոր գյուղացիության կացությունը դաշնակցության այս պետականության շրջանում։ Իհարկե, ներկա գրքույկը, վորնույն այս շրջանին վերաբերող նախագծված խոչոր մեր մի գործի մի քանի մասերի համառոտումն ե, չի կարող սպառել առաջադրվող բոլոր խնդիրները։ Լավագույն դեպքում նա կարող է այդ անել մի քանի կարեոր հարցերի վերաբերյալ, վորով և ինքնին արդեն նա խոչոր գործ կատարձ կինի։

Ավելորդ չենք համարում հիշատակել, վոր գրքույկը պատրաստված է կարճ ժամանակամիջոցում, և վորպես այդպիսին, կունենա անկասկած վորոշ թերություններ։

ԹԱՌԱ



Խմբ. Գ. Պ.

ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՎԵՑ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

Դեռևս 1917 թվին, յերբ պայմանագրերյան մեծ հեղափոխությունը և մուսատանի պրոլետարիատը բայց կիկյան կուսակցության զեկավարությամբ վերջնականորեն տապալեց բուրժուակավածատիրական կարգերն ու հաստատեց պրոլետարիատի դիկտատորան, յերբ առաջին անգամ մուսատանում սկսվեց ծածանվել խորհրդային կարմիր դրոշը, —ահա փաստորեն հենց այդ որից իսկ սկսած Անդրկովկասի վողջ ուսակցիան է գեմա մենչև կիների, զանակցականների, մուսատականների ու մանր-մունք մի շարք այլ հակառեղափոխական կուսակցությունների, սարսափակար յերես թեքեց «Մոսկայից» և Անդրկովկասը կտրեց, անջատեց մուսատանից՝ հայտարարելով իրեն Անդրկովկասի «ինքնիշխան տերը»:

Անդրկովկասում գերիշմող յերեք գլխավոր հակառեղափոխական այդ ուժերը—մենշևկիները, դաշնակցակաները, մուսավաթիստները—շատ հասկանալի պատճառներով յեթե ընդհանուր լեզու ելին գտնում լվով, Մյուլիկով, կերենսկու կառավարության հետ, յեթե կարող ելին նրա հետ գնալ, շարժվել նրա սանկցիաներով, համաձայնության դադ ցարական կառավարության հետ, լույ ու յենթարկվել «ամենավողորմած» կայսրի «վեմափայլ» մինիստրներին՝ կապելով նրանց հետ իրենց շատ հույսերը, ապա ինչ խոսք, վոր այդ ուսակցիոն, հակառեղափոխական ուժերը չեյին կարող և վոչ մի բոտե հանդուրժել խորհրդային իշխանությանը, բայց արդեն ցարի և կերենսկու կառավարությունների վիճակիների վրա ոտեղեն, կանգնեցրել և պրոլետարիատի դիկտատորան։ Սակայն հակառեղափոխական այդ կուսակցությունները վոչ միայն չեյին կարող հանդուրժել խորհրդային իշխանությունը, այլ և չեյին կարող կատաղի թշնամական դիրք չըռնել, ինտերվենցիոնիստական վարքադիմք չունենալ վերջինիս նկատմամբ։ Զե՞ վոր նրանք՝ խորհրդային իշխանությունը մի կողմում և Անդրկովկասի այդ հակառեղափոխական կուսակցությունները մյուս կողմում, բոլորովին հակառակ ծայրերի ուժեր եյին, յեթե բայց կիկյան կուսակցությունը մուսատանի և ամբողջ աշխարհի հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունն եր, ապա հակառեղափոխական այդ ու ուժերը՝ վրաց մենշևկիները, զանակցականները, մուսավաթիստները և այլն վոչ միայն Անդրկովկասի վողջ ուսակցային՝ բուրժուազիայի, կալվածատերերի շահերի կատաղի պաշտպաններն եյին, այլև միջաղգային իմպերիալիզմի հավատարիմ աղենտները։ Կարող եր արդյո՞ք վորեև ընդհանուր լեզու, շահերի համաձայնություն այդ յերկու կողմերի միջև։ Ի հարկե վոչ։ Եեվ ահա այդ եր պատճառը, վոր Անդրկովկասի բուրժուազիայի և կալվածատերերի այդ կուսակցությունները սոսկացին հոկտեմբերյան հեղափոխությունից, վախեցան մասնավորապես այն բանից, վոր ահա կարմիր սոցկալիստա-

կան հեղափոխության ալիքները շուտով կընդգրկեն իրենց մեջ նաև Անդրկովկասը, վոր շուտով կարող ե հեղափոխական բռնկում կատարվել նաև այստեղ, «իրենց» յերկրում և դրանով իսկ վերջ կարող ե տրվի իրենց զարակարգային տիրապետությանը: Ցանկանալով վըրկել իրենց ահա այդ «սարսափելի» վերահաս «վտանդից», հակահեղափոխական այդ կուսակցություններն իսկույն և յեթ կարեցին Անդրկովկասի բոլոր կապերը նուսաստանից և տեղում իրենց իշխանությունը հայտարարեցին: Այդ ակտը կատարվեց նաև միշտգդային իմացերիամբմի թելաղբանքով, վորը նպատակ ուներ Անդրկովկասը կտրել հեղափոխական նուսաստանից, դարձնել այն դեպի Մերձավոր՝ Արևելքը ծավալով հեղափոխական ալիքների դեմ մի պատվար, դարձնել Անդրկովկասը իմացերիամբմի ինստերվենցիոնիստական ուժերի բազա Խորչը դադային նուսաստանի դեմ և մյուս կողմից ել կտրել Անդրկովկասը հեղափոխական շարժումների կենտրոնից՝ նուսաստանից, վորաբեսզի այդպիսով հետ լինի բանվորական-գյուղացիական շարժումների ճընչան գործը ինչպես Անդրկովկասում, նույնպես ել վողջ Մերձավոր Արեավելքում: Ահա այսպիսի նպատակներ ունեյին Անդրկովկասի ուսակցիան ու միջազդային իմացերիամբմը, յերբ նրանք Անդրկովկասը կտրեցին նուսաստանից: Յեվ իրոք, Անդրկովկասը Հռկտեմբերյան հեղափոխությունից հետո, հենց անմիջապես դարձավ հակահեղափոխական ուժերի բազան, իմացերիամբմի ինստերվենցիոնիստական գործողությունների պլանարմը և նորհրդացային նուսաստանի դեմ: Այստեղ եր, վոր միասնակում եր իմացերիամբմի, սպիտակ մոնարխիստ գեներալներ՝ վրանգելի, Դենիկինի ու տեղի հակահեղափոխական կառավարություններ՝ մենչեկիների դաշնակների, մուսավաթիստների և այլն ուժերն իրար հետ՝ մի կողմից Խորհրդային նուսաստանի դեմ կովելու և մյուս կողմից Անդրկովկասի հեղափոխական պրոլետարիատի հերոսական շարժումները ճնշելու համար (որինակ՝ նազվի կոմունայի անկումը<sup>1)</sup>:

Սակայն Անդրկովկասի ուսակցիան, վոր փաստորեն Հռկտեմբերյան հեղափոխությունից հենց անմիջապես հետո կտրեց Անդրկովկասը նուսաստանից, այսումենայնիվ այդ փաստին նա իրավական ձևակերպում տվեց և այն համայն աշխարհից հայտնեց միայն 1918 թվի ապրիլին, յերբ այսպես կոչված «Անդրկովկասյան սեյմի» ապրիլի 9-ի (22-ի) նիստում վորոշվեց Անդրկովկասը կտրված համարել նուսաս-

<sup>1)</sup> 1919 թվի սպիտակ ուժերի (Վրանդել, Դենիկին) կողմից թիֆում յեկոծ դեներալ Բարախովը ուղղակի այդպիս ել հայտարարում եր քիթե նրա Անդրկովկաս գալու նապատակն. և Անդրկովկասի «Հանրապետական» կառավարությունների հետ միանալ, միացյալ ուժերով կովել բայլը կողմի դեմ թե արտաքին և թե ներքին ֆրոնտում: Հետաքայում այդ ուժերի կապերը միմյանց հետ ալիքի ու ավելի ամրանում և չափազանց սերտ ու միանգամայն բարեկամական բնույթ եր ստանում: Դաշնակցական կառավարությունները, ինչպես և վրաց մենշևիկների ու մուսափաթիստների կառավարություններն սկսեցին շուտով ամենասերտ ու օրտակից հարաբերությունները՝ Վրանդել-Դենիկինի հետ: Այսպես որինակ դաշնակցական կառավարությունն իր մշտական ներկայացուցիչներն ուղարկեց սպիտակ ուժերի մոտ, իսկ վերջինները

տանից և այն «անկախ» «ղեմովկատական» «Հանրապետությունների ֆեդերացիա» հոչտիել: Այ շատ հետաքրքիր է տեսնել, թէ ինչպես եր պատճառաբանվում անջատման ակտը հակահեղափոխական այդ կուտակցությունների կողմից: Անջատման հարցը «քննող» հանձնաժողովի նախագահ մենշևիկ Ոնիշաշվիլին, սեմբի ապրիլի 9-ի նիստում զեկուցում եր թե:—

«Անդրկովկասի ազգությունները մինչև այժմ ունեցել են ուստական որինեացիա, վորովհետեւ նա յեղել և նշանաբան հզորության, պաշտպանության արտաքին թշնամիններից և Ռուսականը յեղել ե այն գուռը, վորով Յելլուպայի լույսը թափանցել ե Անդրկովկասի մեջ... սակայն բայլը կողմից յեկալ ամեն կործանելու, նա կազմալուծեց գեմովկատական Փրոնար, նա քայլայեց նուսաստանը: Այսոր ունենալ ուստական որինեացիա, զա կեշանակի ընդգրկել որինեացիան այն արքամիների, վորոնք կատարվում են նուսաստանում բայլի կիների ձեռքով: Այսուհետեւ մեր որինեացիան պետք է լինի Անդրկովկասյան անկախ ֆեդերատիվ գեմովկատական հանրապետությունը»<sup>2)</sup> )

Ինչպես տեսնում ենք, մենշևիկ ազգիսի այս մշուշապատ ֆրաղների տակից ել յերեսում և Անդրկովկասի անջատման իսկական պատճառները, յերեսում եր այն, ինչ վոր մտածում եր Անդրկովկասի ունակցիան: Անդրկովկասի հակահեղափոխական կուտակցությունների համար շարական նուսաստանը «լավ» եր, նրանից «լույս» եր ստացվում մինչև Հռկտեմբերյան հեղափոխությունը, բայց, յերբ տապալմեցին բուրժուատկարման կարգերը և հաստատվեց պրոլետարիատի գիրուատուրան՝ խորհրդացային իշխանություն, ահա արդ ժամանականից նուսաստանը գարձավ «սարսափելի», վորից պիտի հեռու մնալ:

Հասկանալի յե, իհարկե, այստեղ խոսում եր Անդրկովկասի բուրժուագիայի և կալվածատերերի գասակարգային սարսափը դեպի պրոլետարիատի ու աշխատավորության հուժկու հեղափոխական յելույթները:

Պետք ե հեռու մնալ այդ սարսափելի «վտանգավոր» կենտրոնից, համարմբել վողջ ուսակցիայի ուժերն այդ ատելի կենտրոնի դեմ կովելու համար, և հարկավոր եր այս մասին ակտեալ բալոր իմացերիալիստական պետություններին:

Ահա այդ գործը կատարեցին Անդրկովկասի հակահեղափոխական կուտակցությունները, յերբ 1918 թվի ապրիլի 9-ին մեծ ցերեմոնիայով Անդրկովկասն անջատ հոչակեցին նուսաստանից: Զեւկերալսելով այժմ ել իրենց ներկայացուցիչ գնդապետ Զինկեվիչին՝ Յերեան, գայնակցական կառավարության մոտ: Անդամ գեներալ Դենիկինն ուղարկում եր իր վողջույնները, բարեկամական «մաղթանքները» Հայաստանի «Հայաբատության» վարչապետին: Սա յել իր հերթին գեներալ Դենիկինին: Վրանդել-Դենիկինյան ուղարկելու հայտագալական կառավարության՝ գինամթերքներով, փամփուտներով, ձիերով, սպաներով և այլն: Խակ դաշնակցական կառավարությունն ել իր հերթին ուղարկում եր Հայաստանից այն ինչ վոր ու-

<sup>2)</sup> «Մշակ» № 76, 1918 թ. ապրիլ 11:

Անդրկովկասը վորպես մի տմբողջական «անկախ» հանրապետություն՝ նրա կառավարման դեկն ել վերցրին իրենց ձեռքը: Վերաստեղծվեց Անդրկովկասյան կառավարական նոր կարինետ, վորում «ծաղկեփունչ» կազմեցին ունակցին հակածեղափոխական բոլոր ուժերը՝ մենշևիկները, դաշնակները, մուսավաթիստները, կադենները, նացիոնալ-դեմոկրատները, ֆելերալիստները, առց. հեղափոխականները և այլն: Իսկույն պորտփեները վերցրին Զիենէկելին, Խամբէշվելին, Գյորգաձեն, Վրաց այդ «սոցիալիստ» պնակալեզները, Խամբայանը, Քաջազնունին, Սահոկյան՝ դաշնակցական լիդերները և մուսաֆաթիստ Խան-Խոյ-էկն, Հաջինսկին, Ռւսովֆ-Բեկովը և այլն:

Առաջին հայացքից թվում եր թե հակածեղափոխական այդ ուժերը հասան իրենց նպատակին և այժմ կարող են հաշտ ու համերաշխ իշխել Անդրկովկասի վրա: Թվում եր, վոր այդ ուսուցիչն հակածեղափոխական ուժերն այսուհետեւ մի ընդհանուր լիզու գոտած միասին կիշին:

Սակայն այդ թվաց միժիայն առաջին հայացքից: Խրականում այդ ուժերի մեջ չեր կարող լինել մի ընդհանուր լիզու, նրանք չեյին կարող իրար «միս չիրծել»: Յեթե այդ ուժերին մի ընդհանուր ճակատով միացնում եր Խորհրդային Խուսածոտանի գորությունը և Անդրկովկասի պրոլետարատի և աշխատավորության կողմից սպասվող հեղափոխական շարժումները, տապա այդ չեր նշանակում, վոր այդ հակածեղափոխական ուժերի մեջ չկային ներքին տարածանություններ, շահերի խիստ սուր հակասություններ: Այդ հակածեղափոխական կուսակցություններից ամեն մեկը, բացի ընդհանուրից՝ ուներ իր ուրույն ծրագիրը: Նրանցից ամեն մեկը հրապարակ եր կոչված պաշտպանելու Անդրկովկասի բուրժուազիայի և կալվածատերի դասակարգի տարբեր չառվածների շահերն և վորպես այդպիսիք, նրանք յերբեք չեյին կարող լուա դնալ միասին:

Յեթե դաշնակցությունը հայ բուրժուազիայի կուսակցությունն եր և վորպես այդպիսին՝ նա աշխատում եր հայ բուրժուազիայի անտեսական-քաղաքական ծրագրերի իրականացման համար, ապա մուսաֆատիստաներն ել Ազրբիջանի թուրք բուրժուազիայի և կարվածատերերի ներկայացուցիչներն եյին: Աշխատում եյին այդ թուրք բուրժուազիայի և կալվածատերերի անտեսական-քաղաքական ծրագրերի համար: Վեց մենշևիկներն ել աշխատում եյին վրաց բուրժուազիայի և կալվածատերերի շահերի համար: Յեթ բնական ե, վոր Անդրկովկասի բուրժուակալվածատեր դասակարգի այդ յերեք հատկանակներն առաջ առաջի պիտի տային և սուր ճոճեյին իրար գեմ, նրա համար, թե ո՞վ պիտօք ե անտեսական-քաղաքականութեա իշխի Անդրկովկասում, ո՞ւ ո՞վ պիտօք ե պատկանին Անդրկովկասի շուկաներն, հանքային հարստությունները, կալվածները և այլն: Այդ այդպես եր, և հասկանալի յե, վոր Անդրկովկասի բուրժուակալվածատերերի դասակարգի տարբեր հատվածների տարբեր կուսակցությունները չեյին կարող միւնույն անտեսական-քաղաքուկան ծրագիրն ունենալ, չեյին կարող մի ընդհանուր լիզու գոտին լիրար հետ, չեյին կարող միասին տիրապետել Անդրկովկասը: Յեկ իրոք, շատ չանցած այն որից, յերբ այդ սեակցիան ներ: Թույլ եր տալիս Հայաստանում, «իր» տերքիտորիայի վրա զինակը արվի սպիտակ ուժերի, այսպես կոչված «կամավորական բանակի» համար և այլն:

Մնդրկովկասը կորեց Ռուսաստանից և իրեն հայտարարեց Անդրկովկասի տեղը, ստեղծելով հակածեղափոխական բուն-այսպիս կոչված «Անդրկովկասյան սեյմը», ապա շուտով յերեացին այդ կուսակցությունների ներքին տարածանությունները, տարբեր շահերը: Ամեն մեկը ձգուել իր կողմը և խոսք չեր կարող լինել միասին աշխատելու մասին: Այսպիս որինակ անջատման ակտից ապրիլի 9-ին) յերիու որ հետո «Անդրկովկասյան սեյմի» կառավարության կարինետից դաշնակցական միանդարները հրաժարական տվին, պատճառաբնելով, վոր վրաց մենաշվիկները, ի դեմք սեյմի կարինետի արտաքին գործերի մինչխառ Չխենկելու, բոլորովին այլ քաղաքականություն են վարում, «վորոնք վոչ միայն նկատի չեն ունենում դաշնակցության շահերը, այլև ի վնաս այդ շահերի յեն շարժվում: Մենշևիկների ու մուսաֆատիստների մեջ էլ տարածանություններ անգամ այն աստիճանի հասան, վոր սեյմի միատերում նրանք իրար հետ կովում եյին դիցուկ այն մասին, թե սեյմի քարտուղար ո՞ւմ պետք ե բնարել, արդյո՞ք մուսաֆաթիստ Ալիխան հանդեմիրովին թե մենշևիկ Ոնիաշվիլուն:

Տարածանությունները, շահերի հակասությունը քանի գնում, այն սրվում եր: Վերջապես իրար բավական բգկտելուց հետո, մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմն իր 47 որվա գոյության ընթացքում մի քանի սեակցիոն, հակածեղափոխական որենքներ հրատարակելուց հետո ցրված հայտարարվեց: Սեյմի վերջին նիստում հանդես յեկամ մենշևիկների լիզերներից Ծերեթելին, վորը մշուշապատ կերպով սպատճառաբանեց սեյմի ցրման անխուսափելությունը: Շատ հետաքրքիր ե վորպես մենշևիկների լիզերի—նրա բերած փաստարկումները: Նա իր հառում խոստովանում եր—

«Մենք ստիլված ենք վկայել, վոր մեր դիեալն Անդրկովկասի տողովուրդներից մի կամք, մի զորածակատ ստեղծելու ձգումը չիրականացավ: Այս բոպեյիս չկա միություն մեր ժողովուրդների մեջ: (Մերեթելին իրենց հակածեղափոխական կուսակցությունների անունները խորամանկորեն ծածկում ե «ժողովուրդների» անվան տակ.—Մ.):

Մենք կամենում եյինք միացնել Անդրկովկասյան ժողովուրդների ներքին ուժերը՝ թշնամու գեմ մաքառելու համար: Անդրկովկասն անկախ հրատարակելով՝ մենք յերաշխիք ունեյինք, վոր ժողովուրդներից վոչ մեկը չի կարող իր քաղաքական ուղղությունը փաթաթել մյուսների վզին...

Սակայն անկախություն հայտարարելուց հետո մեր հույսը ուրին ի գերեւ յելան... ղեպքերը ցույց տվին, թե Անդրկովկասյան ժողովուրդների շահերը բնակլ միատեսակ չեն... Մենք հավատում եյինք, վոր ժողովուրդներից կարվածատեր հայտարար միասիններն ընդհանուր վետության շահերը: Բայց այդպես չեղավ: Պետական միաբանություն շտուեղծվեց: Անդրկովկասյան հանրապետությունը զույթյուն ունեցավ սոսկ անոնով... Մեր սկետությունը չունեց այնպիսի մարմին, վորի մեջ արտահայտվեր ամբողջ պատճենական կուտյան կամքը և վոր միջոցներ մեռք պետությունը կործանող տարբերերի գեմ... Մենք չենք կարող չայտնել, վոր այլք գոյություն չունի Անդրկովկասյան դեմոկրատական ակտությունը:

Հրատարակելով՝ Վրաստանի անկախությունը՝ այսորվանից Անդրկովկասյան սեյմը չի կարող այլևս գոյություն ունենալ»<sup>3)</sup>:

Այսպես եր ահա պատկերում մենշևիկ լիդերը տիրող դրությունը, վոր իրականում ավելի քան սուր եր, սուր այն աստիճան, վոր մենշևիկ դաշնակ ու մռւսավաթիստ ուժերն իրար գեմ շարունակաբար սրեր ելին ճոճում, ատամ ատամի տալիս:

Մերեթելու ճառից հետո Անդրկովկասյան սեյմի ցրումը ձեակերտող մի բանաձեռ և առաջարկվում, վորը և ընդունվում է: Ահա այդ վորոշում-բանաձեռը:

«Ի նկատի ունենալով, վոր հաշտության ու պատերազմի հարցի նկատմամբ յերեան յեկան արմատական տարածայնություններ՝ Անդրկովկասյան անկախ հանրապետություն ստեղծած ժողովուրդների միջն, ուստի և անհնարին և հանգես բերել մի հեղինակավոր իշխանություն, վորաբիսին խոսի, Անդրկովկասի և նրա անկախության անունից, սեյմը վկայում է Սնդըրկովկասոն իրազես կաղմալուծած և հրաժարվում է իր լիազորություններից»<sup>4)</sup>)

Անդրկովկասի բուրժուակալվածատերերի կուսակցությունները ուրախությամբ ընդունում են այս բանաձեռ ու վերջ տալիս իրենց սեյմական աշխակապուկին:

Սեյմի վերջին նիստի նախադաշը ժամը 3-ը անց 50 րոպե հայտարարում է, վոր Անդրկովկասյան սեյմն այլևս գոյություն չունի: Հակածեղափոխական այդ ուժերը սրանով իրենց ավելի ազատ են զդում: Հենց նույն որը հոչակվում է Վրաստանի «անկախությունը», մենշևիկներն իրենց հայտարարում են Վրաստանի տերն ու տնորենը, ստեղծվում ե վրացական մենշևիկյան հակածեղափոխական կառավարություն:

Նույն անում են նաև մռւսավատիստները: Հետ չեն մռում իհարկե դաշնակցականները. նրանք ևս մայիսի 28-ին իրենց կուսակցության «Պաշնակցության ներկայացուցչական ժողովի և թաղային կոմիտեների» (Թիֆլիս) արտակարգ նիստում վորոշում են Հայաստանը հայտարակը «անկախ» և իրենց դիկտատուրան հաստատել Հայաստանում: Այդ նպատակով նրանք Հայաստանի «դիկտատոր», տերն ու տնորեն են Հայտարարում այսպիս կոչված «հայոց ազգային խորհուրդ» (այսինքն հենց նույն իրենց դաշնակների խորհուրդը) ժամանակավորապես, մինչեւ վոր կազմեյին կառավարություն: Այս մասին նիստում հետեւալ բանաձեռ են ընդունում:

«Ի նկատի ունենալով այն, վոր Անդրկովկասյան սեյմի ինքնացրումից և Վրաստանի անկախության հայտարարելուց հետո լուծվելու յե Անդրկովկասյան կառավարությունը... Ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, վոր հայոց ազգային խորհուրդը ուժեղացնելով իր կազմը՝ անցնի դորձի՝ հայության կենտրոնում ստանձնելով կառավարական ֆունկցիաները, ոժութակած դիկտատորական իրավունքներով՝ հայ կյանքի բոլոր իրավունքների նկատմամբ»<sup>5)</sup>)

<sup>3)</sup> «Մշակ», 1918 թ. մայիսի 28-ի № 97.

<sup>4)</sup> «Մշակ», 1918 թ. № 97. 28-ի մայիսի.

<sup>5)</sup> Ա. Վ. Վրացյան. — «Անկատի և Միացյալ Հայաստան»—1920 թ. Յերեան:

Յեկանակա ազգային խորհուրդն ել ժամկեսի 30-ին ի լուր ամբողջ աղոթի հայտարարում ե, վոր՝

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և կրաստանի և Աղբերեցնի անկախության հրատարակում աղոթի հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը: Վորոշ ծանրակշիռ պայմաններով թողնելով մոտիկ որերում կազմել հայոց ազգային կառավարություն՝ աղօգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական դեկը վորոշելու համար»<sup>6)</sup>)

Վերջապես հունիսին կազմվում է դաշնակցական կառավարությունը, վորի մեջ մտնում են նախարարակետ (վարչապետ) Հ. Քաջազնունին, ներքին գործերի նախարար՝ Արամ («Հայոնի» Արամ փաշան և) արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյան, դիմուրական՝ գեներալ Հ. Զախվերդյան և Փինանների՝ Խ. Կարճիկյան: Հուլիսի 17-ին ազգային խորհուրդը և կառավարությունը, վոր մինչ այդ թիֆլիսումն ելին գործում և բուն Հայաստան գետս վոտք չելին գրել, թիֆլիսից փոխադրվում են Յերեան, վարեկ սպասուսի 1-ին բացվում է իրենց՝ դաշնակցական Հայաստանի «Հանրապետության» այսպես կոչված առաջին «որենսդիր ժողովը» (Հայաստանի խորհուրդը), այսինքն՝ դաշնակցական «պարլամենտը», ուր մեծ պափոռով և հոխորտալից ճառերով հանդես են գալիս «Հայր Արքամ» Սահակյանը, Քաջազնունին և այլն «ազդիք» և «Հայրենիքի» համար կոչեր անելով:

Այսպիսով Դաշնակցության կառավարությունն ու պարլամենտն անցնում են գործի:

Թեև, ինչպես մենք ասել ենք արդեն, Դաշնակցությունը վաստորեն իշխում եր Հայաստանում գետս 17 թվից, Հոկտեմբերյան հեղափոխությանց անմիջամբ հատո, սակայն ձևականորեն և իրավականորեն ահա այս ճանապարհով է, վոր կաղմավորպատմ, ստեղծվում է դաշնակցական կառավարությունը, վորը միջազգային իմպերիալիզմի ողնությամբ ու հովանավորությամբ կարողացավ իր գոյությունը քարշակ մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը, յերբ վերջապես Հայաստանի բանվորներն ու աշխատավոր զյուզացիները կոմկուսի ղեկավարությամբ, հերոսական մայիսյան ապստամբության բովով անցնելուց հետո, կարողացան, հուժկու մի հարվածով վերջնականապես տապալել դաշնակցական բուրժուական ստանձնելով կառավարական ֆունկցիաները, ոժութակած դիկտատորական իշխանությունն, պրոլետարիատի դիկտատուրա:

Հետոամուս լինելով դաշնակցական կառավարության կազմվելուն, այժմ տեսնենք թե Հայաստանում դաշնակցական կառավարությունը ինչպիսի անտեսական, սոցիալ-պատակարակային քաղաքականություն եր վարում և դրա հետեւանքով ինչպիս եր հայաստանի, բանվորա-դյուրագիական հոծ մասսաների տնտեսական, սոցիալական գրությունը:

<sup>6)</sup> Նոյեմբեր:

## ԱՆՎԵՐՁ ՊԱՏԵՐՍՅԱՄՆԵՐ ՈՒ ԶԱՐԴԵՐ

Անդրկոմիկասը մասնաւելով յերեք առանձին մասերի և միջազդակամբ իմպերիալիզմի «բարի կամեցողությամբ» ու հովանավորությամբ» տիրապետականությամբ մենչեւիները՝ վրաստանում, դաշնակները՝ Հայաստանում ու մասավաթիստները՝ Աղբեջանում, Անդրկոմիկասի բուրժուակավածատեր գասակարգի տարբեր հաստացների այդ կուսակցություններն այժմ ամենի ազատ սկսեցին ազատ սկսեցին վարել իրար հակառակ իրենց տնտեսական-քաղաքական ծրագրների իրագործման քաղաքականությունը, մի քաղաքականություն, վարի կիրառումը կապված եր Անդրկոմիկասի հոծ բանվարագուղացիական մասսաների առատ արյան հետ։

Յերբ հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունը՝ Դաշնակցությունը, ինչպես տեսանք, միջազդային իմեպրախիզմի «բարի կամեցողությամբ» ու «հովանավորությամբ» 1918 թվին հոչված Հայաստանի «անկախությունը» և իր բուրժուակուլակային դիկտատորան հաստատեց Հայաստանում, ապա նա անմիշապես սկսեց ավելի բուռն թափով ու տենդորեն վարել եր վաղեմի ուսակցությունը, հականեղափոխական քաղաքականությունը։

Հայ բուրժուազիայի կապիտալիների ներդրման ու կուտակման համար բոլորովին չեր բավարարում դաշնակցական Հայաստանը, վորն այն ժամանակ ընդգրկում եր զբեթե միայն Յերեանի նահանգը, հարկավոր եր յերկրը լայնացնել, նոր չուկաներ, նոր տերիտորիաներ ձեռոք բերել, թալանի ու շահագործման պիտանի նոր յերկրամասեր զանել։ Յեվ ահա այս նպատակով, Դաշնակցությունը, վորպես այդ բուրժուազիայի կուսակցությունը, մեծ ախորժակավ ու նոր թափով սկսեց գարցալ իր յերեանի ծրագիրները հետապնդել, «միացյալ» ժողովից ծով Հայաստանը, տաճկական վեց վիլայեթները, Միջյերկրականի սպիտի ընկած հարուստ կերպիքան, Բաթումի յերկաթուղարիծը և այլն տերիտորիաները։ Դաշնակցությունը ձգուում եր այնպիսի մի «միացյալ Հայաստան» փորբ միացներ Սև ծովը Կոստացի ծովի հետ և այս յերկուսն ել Միջյերկրական ծովի հետ։ Հակայական մի ընդարձակ տերիտորիա, վոր պիտի դրվել հայ բուրժուազիայի, իմպերիալիստական պետությունների ամենակարող՝ կապիտալիների արտադրություն տակ, և վորը պիտի զանաբար հայ և անդր-Փրանշ բուրժուազիայի թալանի ու շահագործման որդեկար։

Ահա այն տնտեսական-քաղաքական ծրագրոր, վորի համար զետ անցյալներում աշխատել և Դաշնակցությունը և վորի համար առանձնապես աշխատում եր այժմ իր իշխանության շրջանում։ Յեվ իրոք չմիացյալ Հայաստան» բարձախոսուում հեռանկարները, զրագիչ Հարաբատությունները յերեք քուն ու հանգիստ չելին կարող բերել Դաշնակցությանը, վորն ահա սկսում է այժմ աշխատել այդ ուղղությունը՝ փրփուրը բերանին։

Սակայն Դաշնակցությունն իր այդ ծրագիրները կարող եր իրադրել և նոց տերիտորիաներ պավել միմիայն իրեն շընակատող Հարբական սահմանակցի յերկների հաշվին։

Իրկ ինչպես տեսանք գանակական Հայաստանի սահմանակցի յիրենիքում իշխում ելին նույն «սորտի» կուսակցությունները, վորոնք վոչ միայն չելին կարող հանդուրժել Դաշնակցության այդ ուղղությունը կատարվող քայլերը, այլև հենց իրենք նույնպես տարված ելին

Դաշնակական, նոր տերիտորիաներ գրավելու այդ նույն քաղաքականությամբ։ Այնպիս զոր, հարցը կարող է վորոշել միմիայն զենքով, պատերազմը։ Յեվ ահա Դաշնակցությունը չըավագությունը զենքից, պատերազմից և իհարկե իրեն զավաճանած, իրենց կամդներ զենքից ու աշանույությամբ իրավական քաղաքականությունը, ակսեցի ամբանությամբ զիմեց իր առվորական հայդուկային-ավանույությունի բանական քաղաքականությամը, սկսեց պատերազմի, ուուր ճոճել կողմի բուժի և Հայաստանի բանվոր բանական մասսաներին—բունի ուժի և տրակաների տակ քշել զեպի Փրոնտները, արյուն թափելու «Հայրենիքի» և «աղբի», այսինքն՝ ի փառ հայ բուրժուազիայի չահերի նրա նպատակների և նրա կուսակցության՝ Դաշնակցության։ Յեվ ահա Անդրկոմկան սեյմի քայլայումից ընդամենը հինգ ամիս հետո դաշնակցական կառավարությունն առաջնորդ լուրջ պատերազմն ունեցավ վրաց մենակիների հետ։ 1918 թ. գեկտեմբերին կոռու և Ախալքալակի շուրջն սկսեց գաշնակ-մենակիլյան պատերազմը։ Դեկտեմբերի 9-ին դաշնակցական գորքերը հարձակվեցին մենակիլյան պահակախմբերի վրա և դըրանով իսկ սկսեց պատերազմը։ Սկսվեց Դաշնակցության կոչերի, աղղերի շարանը «Հայրենիքի», հայ աղդի փրկության» համար բակույն հանգստես յեկավ իրեն Դաշնակցականի և Ղարաբիլիսայի զինվորական շրջանի պետ հորջորջող խմանելու մառավետ ֆրոն, վորն «Արարատյան դաշտիք» բնակչությանը և «Հայրենակիցներին» ուղղված մի կոչով զիմում եր «Արարատյան դաշտի հայտապատճեն» փրոնտ մենակիլու։ Հանուն հայրենիքի պաշտպանության և հանուն հայ աղդի փրկության։ Սակայն աշխատավորությունն առաջնորդ անդամ չե, վոր լուրմ եր դաշնակ-իմբապետների այսորինակ կոչերը. նա սկսում եր հասկանալ թե ինչ պատերազմ է այս և ինչ նպատակներ և հետազնդում և դրա համար ել նա բառ ամբողջի չարձագանքեց գաշնակցական կառավարության կոչերին։ Հայ աշխատավորությունը չդնաց ֆրոնտ, «աղդը փրկելու»։ Դաշնակցական կառավարությունն ամսական սկսեց պարագեցին դեկտեմբերը։ Հրատարակվեցին զեկրեաներ, հրամաններ։ Այսուհետեւ գանձական կառավարության զինվորական «Հայարար» գեներալ-մայոր Հախվերդյանը հրաման արձակեց թե։

«Բարոր Հայաստանում ապրող արական սեռի հայերն ու առորիները 20-25 տարեկան, վորոնք չեն գտնվում զինվորական ծառայության մեջ (զորականակրում կամ զինվորական հիմնարկություններում ու վարչակներում) պարտավոր են յերեք որվա ընթացքում սույն Հրամանն արձակելու որից ներկայանալ համապատասխան հավաքական կենտրոնները (սրբունի պունիտին), վորուեղից կուզարկվեն զրամանակները կամ կարձակվեն զինվորական ծառայությունից՝ բառ որենքի համապատասխան վիկայեաններով։ Հարկ յեղած զեպքում սրանից հետո կհայտարարվի նոր զաղանցական քաղաքականությունը պարագաները 26-32 տարեկան քաղաքականություններին ժողովելու։

Յես կարգադրություն ելի արել բոլոր նրանց, վորոնք չեն դանվում զրամանակրում, կատարեն իրենց պարտքը զինվորական ծառայության, բայց քշերը կատարեցին իրենց պարտքը։ Այդ պատճառով ներկա հրամանով նորից կոչ եմ անում ու հայտարարում, վոր որենքի համապատասխան վիկայեաններով։ Հարկ յեղած զեպքում սրանից հետո կհայտարարվի նոր զաղանցական քաղաքականությունը պարագաները 13

ժամանակամիջոցին չեն ներկայանա հավաքական կենտրոնները ու չեն ստանա այնտեղից համապատասխան վկայականներ՝ կհամարվեն կովկ մասնակցելու հրամանից խուսափողներ և համաձայն Հոդ. 245 ՀՀՀ 1869թ. գ. 20, 4-րդ հրամանին և ժամանակավոր կառավարության հրամանի № 44, Հուլիսի 22-ին 17 թվի կյենթարկվեն

### ՄԱՀՎԱՆ ՊԱՏԺԻ

«Գրկելով իր բոլոր սուազվածքի իրավունքից...»:

Սյապիսի ահարեկումների ու տերորի միջոցով Փրունա քշեցին բանվորական-աշխատավորական մասսաներ՝ արյուն թափելու բուրժուայի գրանների համար: Սկսեց յեղայրասպան դաշնակամենց ևիկյան առաջին պատերազմը: Սպանվածներ յերկու կողմից: Ամեն ու այսորինակ հեռազերեր, թե՝

«Ենկատերինովելդ. 20 դեկտեմբերի. — Գիշերն անցավ հանդիսա, հայկական զորամասերը Յեկատերինովելդի մոտ կորցրել են սպանված 6 ոֆիցիր և 230 զինվոր, վիրավորվածներին նրանք կարողացան տանել, վոր յերկում և ճանապարհի վրամացած արյան հետքերից: Ժող. գվարդիան կորցրեց 30 սպանված...»<sup>1)</sup>

Սյապես շարունակ մի ամսից ալելի ամեն որ կոտորածներ, արյունահեղություն, աշխատավորության արյուն հայ-վրաց բուրժուազիի համար: Սակայն վոչ միայն արյուննեղություն, կոտորածներ, այլև դրա հետ միասին զյուղերի, ընջանների ամբողջական տվերումներ, թալաններ, աշխատավորական տնտեսությունների վոչնչացում և խորտակում: Բայց ինչ փույթ այդ բոլոր պատերազմ սարքով հականեղափոխական ուժերի համար: Զե վոր նրանք մտածում ելին իրենց դասկարգային նախատակների մասին: Սյապես, որինակ, դաշնակ պարօն այդ պատերազմի ժամանակ հրճվում ուրախանում ելին: Յերբ կատարվում եր այդ չափանված վոճառքությունը, ավերումներն ու կոտորածներն, այդ նույն ժամանակ պարոն Վրացյանը ցինիկորեն խմբապետ մառկերիստ Դրոյին հեռազերում ե, թե. —

«Գործող բանակ, Դրոյին. — Սերելի Դրո, Հ. Հ. Դաշ. Փրակցիան կենտրոնական կոմիտեն և բյուրոն չերժապես վողջունում են քեզ, քո ընկերակիցներին և քո դեկավարության տակ գտնվող հերոսներին, Ռազմական մինչև Խրամ տարված մայլուն զինվորական գործողությունների համար: Փառք և պատիվ նրանց, վորոնք նկան հայրենիքի հանդեպ իրենց ունեցած պարտականությունները կատարելիք»:<sup>2)</sup>

Սյապիսով դաշնակցական լիդերը վողջունում եր յեղայրասպան կոտորածները, արյուննեղություն, պատերազմը, վոր բերում եր իր հետեւից գյուղերի ու ըրջանների ավերում, տնտեսական կյանքի անկում, և վորպես այդ բոլորի բնական հետևանք, համատարած մասսայական սովոր թշվառություն, մահ:

Սակայն չափ հետաքրքիր ե տեսնել, թե ինչով վերջացավ այդ վոճառքությունը՝ դաշնակ-մենչեւիկյան պատերազմը:

1) «Մշակ» 1918թ. դեկտեմբերի 23 № 203

2) «Զանգ» 1918թ. № 85

Մի ամբողջ ամսից ավելի կոտորածներ, գյուղերի ավերում սարքելուց հետո՝ հանդես յեկավ միջազգային իմպերիալիզմը և իր թաթը դրեց վիճակի ըրջանների վրա: Այն ըրջանները, վորոնց համար կոիվելին մզում դաշնակներն ու մենչեւիկները, դիշատիչ իմպերիալիզմը զցեց իր ձեռքը և այսպես կոչված «չեղոք դոնա» հոչակելով Քյոլազերան կայարանից մինչև Սադրախուր կայարանը, իր մեջ վերցրած հարուստ Ալազանական աշխատավայրը, գարձեց իր գաղութը, վոր մինչև խորհրդայնացումը դիշատիչ շահագործման ու թալանի յենթարկվեց միջնադարյան կողմքը: <sup>3)</sup>

Դաշնակ-մենչեւիկյան կուսակցությունները պատերազմ սարքեցին, ահագին ավերումներ և կոտորածներ դորձեցին և վերջիվերջո այն ուղղիստորիան, վորի համար կովում ելին, ընկավ իմպերիալիզմի ձեռքը վորպես մի զաղութ: Սյապես եր ահա հականեղափոխական այդ ուղղի բոլոր գործերի վախճանը:

Սակայն դաշնակցական կուսակցությունը չեր կարող սրանով սահմանափակվել: Նա իր սոցիալ-դասակարգային եյությանը դաշնամած, հակասած կլիներ, յեթե նորից չարունակեր իր խայտառակ ջարդարար ավանդությունությունը: Յեվ իրոք դաշնակ-մենչեւիկյան առաջին պատերազմիցից, չափ չանցած դաշնակցությունը ըստ պատերազմների մի ամբողջ շարք սկսեց Ալեքսականի և Տաճկաստանի դիմ, անընդհատ պատերազմների յերկար շարան, վորոնք չարունակվեցին մինչև դաշնակցական կառավարության վերջին անկման որը: Նորից ուղղի ուղղի աղջերները, աղջեր, կաթողիկոսական կոնդակներ, հայրենիքի, հայազգի փրկության մասին, այժմ արգեն «անհավատների», զմուռուրման, տաճկական հորդաների դիմ»: Նորից անասնական չոփնիզմով հազեցված կոչեր, ինչպես որինակ՝ այսպես կոչված զորածակատին ուժանդակող կոմիտեյի հետեւյալ կոչը. —

### ԿՈՉ

«Տաճիկ փաշաները վերջին փորձն են անռւմ փրկել կործանակող Տաճկաստանը: Նրանք իրենց քիմն ու պառնեն հույների մոտ ջարդելուց հետո, զեսից-դենից հավաքել են իրենց սոված, ուժասպառ դորքը քում են մեր յերկիրի վրա, վոր կշացնեն մեր հացով, հաղջեն մեր չորերը (պարուն դաշնակները չեն ամաչում խոսել հացի, հաղուստի մասին, վորոնք իսպառ գործություն չունեյին իրենց յերկում. — Մ.) և յեթե կարելի յե, կործանել մեր յերկիրը: Հայաստանի քաղաքացիներ, մեծ վտանգներն անցել, պրծել են (դաշնակ խմբավետները մեջ եւ այդ բանը կրկնում ելին. — Մ.) Հայրենիքը ու զորք ենք սուղծել, հիմա ամոթ կլինի մեջ համար՝ յեթե այս անդամ չժարդենք տաճիկ-զորքերի այդ խոլճալի մնացողությունին:

3) Վորպես նմուշ այն բանի, թե իրոք ինչպիսի շահագործման ու թալանի յերենթարկում այդ չեղոք զնանք իմպերիալիզմի կողմէց, այսպես ավելիորդ չեր յենթարկանից պայուղային թայն» Թերթից վերցրած տուրքեր այն վերցրվում եր զյուղացիությունից:

1. Ռդարավետավարի տուրքաց այդ բանի մասին, թե իրոք ինչպիսի շահագործման մասին, թե իրոք ինչպիսի շահագործման մասին:

2. Միանվագ տուրք չնչի վրա 2 ո. 75 կոպ.:

3. Վարելահողերի տուրք դեսպանին 50 ո.:

ՄԵՆՔ չեյի՞նք, վոր 1918 թ. Սարդարաբատի և Ղարաքիլիսայի կոխմաներում հրաշքներ զործեցինք: ՄԵՆՔ չե՞լինք վոր ցըիլ տվինք Զանդիքասարում, Շարուրում, Բոյուք-Վեղիում բուժ դրած տաճկական հորդաներին (գաշնակ խմբապետները խաղաղ աղդաբնակության կատորելը, թալանելը, ցինիկորեն համարում են հրաշքներ, հերտություններ.— Մ.): ՄԵՆՔ ուժ ունենք, աեղք յեկած ժամանակ հրաշքներ ենք զործում, բայց գետ մեր արյան մեջ հին սորկական վախի մնացորդ կա: Դեն չպատենք այդ վախը, մենք այլևս յերբեք չպետք է հաղթվինք: ՄԵՆՔ հիմա կովող ու հաղթող ժողովուրդ ենք: Մեր զորքն արգեն վախեցրել ե Ծնամուն: Մեր զորքն անուն ունի: Մի լսեք վախկոտներին, դասալիքներին և դավաճաններին. լսեցիք մեր քաջարի զորքը առաջնորդներին ...

Հայ քաղաքացիներ, վերջին կովմերն են, միքանի ուժեղ հարված ել տանք թշնամուն, ել նա մեր յերկը կողմը չի նայի: Լարենք մեր ուժերը, ողնենք մեր կառավարությունը, զորքերին, մեր փրկիչներին: Ամեն քաղաքացի թող ամեն որ հարց տա իրեն, թե ի՞նչ ե արել հայրենիք փրկության համար: Խոսելու ժամանակ չե, պետք ե զործել և զործել՝ վճռական կերպով: Հայ քաղաքացիներ, վոտքի կանգնեցրե, ամբողջ հայությունը դարձ պէտք ե զառնա: Ողնեցրե մեր իշխանություններին, վոր զորահավաքն ավելի հաջող բնթանա: Դասալիքներին քշեցեք տներից, այդիներից և թաղստացներից: Ամաչացրե վախկոտներին, զնացեք զինվարժության, մենք պետք ե հաղթենք թշնամուն և անպատճառ կհաղթենք: Բավական ե ինչ թուրքը գլուխներս տարավ: Գնանք ձգմենք մեր դարավար թշնամուն և հանդիսատ կյանք վայելնք: <sup>(1)</sup>

Սակայն այս որինակ անբարտավան ու ցինիկ կոչերն ես չեյին կառու վորևե արձագանք զանել աշխատավորական մասսաների մեջ: Դաշնակցական այդ քարոզները չեյին կարող այլիս հիմարազնել, թմրեցնել բանվորա-պյուղացիական մասսաների մտքերը: Անվերջ ու անընդհատ պատերազմներում յեղած, պատերազմների հետեւանդներ՝ ավերում—

4. Խոտհարքների տուրքը՝ գեսիատինը 40 ռ.

5. Դադախուլի, յուրաքանչյուր գազին 13 ռ.

6. Փայտի փող, ծիխ վրա 16 ռ.

7. Խոտ կոմխօսրիատին, արբստավներին, ամեն զյուղից 5-10-20 ռայլ.

8. Սալեր կոմխօսրիատի, պրիստավների համար, վորքան պետք ունեն.

9. Փայտ կոմխօսրիատի, պրիստավների համար, վորքան պահանջնեն.

\* Անտառային վարչության հարկ, տարեւչչիներին.

11. Գլանին ոսմիկ.

12. Գլանիու պիսիրին ոսմիկ.

13. Գրտավի ոսմիկ.

14. «Զեկուցիա»—այսպես կոչում են այն ծախքերը, զորոնք արվում են զյուղարում պրիստավներին և նրանց շաբաթմբին ընդունելու և կերպակելու համար: Պրիստավների այցելությունը մի կատարյալ պրատուհաս և գյուղացիների համար և զյուղական քյուղական իրեր պատիք այժ կամ մարդու տունն և անում այդ «զեկուցիան»: (Տես և լու, գյուղ, ձայն» 20 թ. № 29:

4) Հ. Տեր-Հակոբյան «Հայաստանի վերջին աղետը»—1921 թ. Պոլիս.—Եջ 46—47:

ներ, թշվառություններ տեսած և բուրժուա-կուլտային դաշնակցական գիշտառապատճեն զարդ առաջնորդ կորու մասսաներին այլևս չեք կարելի խարել: «Հայրենիքի, ապդի փրկության» կոչերն ու ապդերը շատ ծանոթ ելին մասսաներին. նրանք շատ լավ պիտելին նրանց ինկա-կան երտթյունն ու նպատակը: Աշխատավորական մասսան հրաժար-վում ե կտրականապես ֆրոնտ մեկնելուց: Կա չեր ուղղում զնալ և ըն-կընել հայ բուրժուապիտիցի համար: Սկսիում են մասսայական դժողովություններ, տրտունչներ, համատարակում գասալքության զեմ, ինչպես որինակ ստորև գասալքության զեմ ուղղված որենքը, վոր ստորագրո-ված եր ներքին զործոց նախարար Ս. Օքարատյանի կողմից:

«1. գասալիքները 1918 թ. հուլիսի 24-ի նախարարների խորհրդի հաստատած որենքը համաձայն յենթարկվում են մահ-վան պատճի զինվորական դաշտային դատարանի միջոցով: Նրանց ամբողջ շարժական և անշարժ գույքը կույր գրավվում ե հոգուտ պետական գանձարանի:

2. Դասալիքների հետ ապրողներն ու նրանց ակնհայտնի թագդողները յենթարկվում են 1-6 տարի բանտարկության և նրանց շարժական ու անշարժ գույքը կույր գրավվում ե հոգուտ պե-տական գանձարանի»: <sup>(5)</sup>

Սակայն իհարկե այս որենքներն ու դեկրետներն ես չեյին կարող, ինչպես ասացինք, գրությունը փոխել, չեյին կարող ոգնել դաշնակ-ինմարդատներին: Ընեհակառակ, չնայած այս բոլորին, քանի զնում դաշ-նակցական զորքերում այնքան մասսայական կերպարներ եղ ստանում ու սիստեմ զանում գասալքությունը: Արենքները, գեկրետներն ու ար-տակարգ միջոցներն անգամ անզոր եյին այդ պրոցեսի առաջն առնել: Այսպես որինակ, տեսեք թե ինչ ե դրում շատ շքանների ու դաշտանե-րի թվում նաև եջմիածնի գավառի համայնական վարչությունը 1920 թվի հուլիսի 14-ի № 1643 գրությամբ՝ «ներքին զործոց նախարարի» հասցեյով:

Գավառում գասալիք զինվորների համար մենք մինչև այժմ ձեռք ենք տուլ անյերևակայելի միջոցներ և զրա համար ամբողջ վարչական կազմը դրել լարված գրության մեջ: Մեղ արված: Համանալներն այս առթիվ ճշուությամբ կատարելու համար, մենք ստիպված յեղ յեղել զործ զնել նույնիսկ ապորինի միջոցները. մենք ստիպված ենք յեղել զասալքներին ձեռք բերելու համար շատ հաճախ դիմել— ձեծի, անթույատրելի միջոց-ների, բանագրամել նրանց կայք-զույքը, նույնիսկ այցել զեղերն ու տները: Թեկուղ այսպիսի միջոցներով, համենայն զեպս, մենք միշտ ել կարողացիկ ենք մեծ քանակությամբ դեղերաբիներ հա-վաքել և ճամփել զնելերը, բայց նրանց թիվը զավատում չի պա-կասում յերեք, զորովհետեւ զնելերում նրանց համարավոր չի լի-նում պահել և մենք մինչեւ յեղենույն գասալիք զինվորներին ստիպված ենք լինում վիճակը ու դանել 10-միլիոնամուն: <sup>(6)</sup>

5) Նույն տեղ էջ 49-50

6) Դեմ. արթիվ ներք. դորժ մինչ գրությունը 1898 թ. ՀԱՅ-ԱՐՄ. ՀԸՆ

Յեկ իրոք, աշխատավորական մասսաները մասսայորեն հրաժարվում ենին ճակատ մեկնելուց : Նրանք չեյին յենթարկվում դաշնակցական ամենորյա հրաժանաներին, ականջ չեյին զնում «հայրենիքի փրկության» կրչերին, վորովհետև հասկանում եյին այդ բոլորի նպատակները ու եյությունը : Ենք վոչ միայն այդ, անդամ ճակատում, զորամասերի մեջ, սկսել եյին արդեն յերեան գալ զասակարգային պայքարի դիտակցության ելեմնաները : Ճակատում յեղող զորամասերի մեջ, վոր գերազանցապես աշխատավորական ելեմնանից եք կազմված, խոսում եք արդեն զասակարգային պայքարի հստակ ու հատու լեզուն . բայց եկիյան կուսակցության լոգունդները հիմքեր երին դրել արդեն նաև դաշնակցական կառավարության զորամասերում : Դեռևս ահա 1918 թվին «արդասեր» դաշնակ պարոնը կատաղած ու ահարեկված էնորդոնի եներից հայտարարում եք ի լուր բոլորին, թե .

«Մութ պրովակացիան շարունակում ե հայ զինվորների մեջ ցանել իր չար սերմերը : Վարակումը, վոր ավերիչ ազգեցություն և թողել ոռուսական զնդերում և թունավորել ոռու միամիտ, անզիտակից զինվորներին, աշխատում ե սև վերքեր բանադնակացինների զնդերում հայ զինվորների մեջ և գայթադիեցնելով վերջներին գործիք դարձնել անզատասխանատու անարիթայի մեռքում : Վորոշ խմբակ փորձեր ե անում վարակումից զերծ մնացած զորամասերի կյանքն ևս խանգարել, աշխատելով կաղմալուծել ազգային զորքի շարքերը :

Փաստերը մեր առջևն են, հայ զինվորության մեջ տարածում են, թե ազգային զնդերը հակադեմոկրատիկ, հակահեղափոխական կազմակերպություններ են, վորոնք բուրժուազիայի տրամադրության տակ են և վերջինս առաջինների միջոցով ռեակցիայի պատրաստում : Յեկ այդ վոչ միայն թիկունքում, այլ և ճակատում . . .

Բայց իսկմի անունը լսած հայ կամ վրացի զինվորը ազգային զինվորական ժողովներում կատարում ե տիսուր դեր՝ ցանկանալով զինվորակացիան ժողովներունը :

Հարկավոր ե այդպիսի պրավակացիան անմիջապես պատասխանը հակադործողությամբ . հասպազումն մեղ կհասցնի տիսուր անակնկաներին, յերբ սրբեն ուշ կլինի : <sup>7)</sup>

Սակայն այսուսմենայի այս հանգամանքը զեռևես այնքան խոր ու լայն կերպով չեր արտահայտվում, վոր ունենար վճռական աղջեցություն, բայց եկիլան կուսակցության հեղափոխական լոգունդները զեռև ևս չեյին ընդդրյակել վող բանվորական-դյուլացիական մասսային, վորպեսող նրանց վոտքի հանելին ու առավակեյին զաշնակ խմբապետական ռեժիմը, բուրժուատ-կուլակային այդ դիտառուրան և դրանով իսկ վճռեյին անվերջ պատերազմների ինդիբը : Մասսաները դեռ ևս կաղմակերպված ու պատրաստ չեյին լուրջ, խոշոր հեղափոխական յելույթ կատարելու դաշնակցական կառավարության դեմ : Յեկ վորովհետև այդ այլպես եր, դաշնակցությունը զեռևս այս կամ այն չափով հաջողություն իմ մտրակների և ահարեկումների գամեան միջոցներով քշել մասսաներին դեպի ճակատ :

Յեկ քշվում եյին Փրոնտ ի հարկե բանվորական-աշխատավորական

7) «Հարդուն»—Թիֆլիս 1918 թ. 6-առողջաբեր № 3.

մասսաները, աղքատ դրուզացու միակ աշխատող ձեռքը՝ տղան, աշխատումակ բանվորները և այլն, իսկ կուլակները, բուրժուաղիան, իրենց աղյաներով, ամեն տեսակ մասուցերիս աղյա կերպով կարող եյին դրուել, ման գալ առանց ֆրոնտի յերեսն անդամ տեսներու : Այն ժամանակ, յերբ մորակները հարվածների ուժով անյերեակայելի դաշտան, արտակարդ միջոցներով հավաքում եյին աշխատավորական մասսաներին ֆրոնտ ուղարկելու, նույն այդ ժամանակ հայ բուրժուաղիայի կուլակության յերիտասարդ և վոչ միայն յերիտասարդ, սերունդի կողմից կազմակերպվում եյին խրախանքներ, քեֆիր ու աղյա ու աղամառով զրուանքներ : Ինչուս ասացինք Փրոնտ եյին ուղարկվում միմիայն աշխատավորական մասսաները . ահա մի փոքր իլլյուստրացիա այդ մասին . ներքին գործոց մինիստրին նույն այդ մինիստրության աշխատակիցներից մեկը 1920 թ. մարտին «միամտորեն» բողոքում ե, վոր՝

«Սույն մարտի 22-ին, յերեկոյան ժամը 5-ին, դուրս գալով Աստաֆյան վաղոց յես հանդիպեցի 2-րդ քաղաքամասի կոմիսարի ողնական վոնի Վարդանյանին, վորը գասալիքներ հալածելով անցնում եր Աստաֆյան փողոցով գեպի զավառական կոմիսարիտատ : Վորան արդարացի յեր կառարկում այդ գասալիքների ձերբակալությունը, (այդ յես կասկածում եմ) յես իրավունք ունեցի կասկածելու, վորովհետև շատերի և նույնիսկ իրեն՝ Վարդանյանի ներկալությամբ աղատ ու քաջարի անցնում եյին Աստաֆյան և այլ փողոցներով հաղարավոր գասալիքներ իրենց մառզերով, մի թե այդ նկատելի չեր պ. Վարդանյանին, վորն իր առջև կոպիտ ուժի ազգեցության տակ տանում եր ցնցուտիների մեջ խեղճ ու վողորմելի բազմությունը դեպի զավառական կոմիսարիատը : Ինչու չեյին ձերբակալվում այդ մառզերի կոչված դասաւլիքները, վորոնք աղատորեն անցնում եյին ու ծաղրում այդ խեղճ բազմությունը, վորը գասալիքներ, վորոնք աղատորեն անցնում եյին ու ծաղրում աղատության կառավարության, տանձվել ու մեռնել աղդի ու պետության հարաբերությանը :

Այսպես մտրակների ուժով հավաքում և բոնի կերպով Փրոնտ եյին քշում «ինքն ու վողորմելի բազմությունը», իսկ քաղաքի փողոցներում վիստով հաղարավոր մառզերիս աղատորեն զրուանում, զվարա ճանում և հետորեն ծիծաղում եյին «կեղծ» բազմության վրա : Դաշնակցական կառավարության անընդհատ անվողության աղատերազմները կուլ եյին տալիս դեռ շատ այդպիսի «ինքն» ու վաղորմելի բազմություններ, դեռ Հայաստանի բանվորական, աշխատավորական մասսաների ծոցից դուրս եյին գալիս հայարներ, տասնյակ հազարներ զանակության սարքած սպանդում ընկներու : Համար : Հայաստանի աշխատավոր ինքնությունը զանակացական այդ անընդհատ պատերազմների ընթացքում եյին աշխատատանկ ձեռքերից և հենց միայն այս պատճառով ինուք չեր կարող լուսներ տեսներության մասին : Սակայն անընդհատ պատերազմները միա յերկիր աշխատատանկ մասսաների մեջ այլ դաշնակցական կառավարության, տանձվել ու մեռնել աղդի ու պետության հարաբերությանը :

8) Գետարիսիվ ներք. գործ. մին. գործ № 1827

վում : Կազմվում եյին թշվառ , դոյության վերջին հնարավորություններից զուրկ գաղթականական խոչոր զանդվածներ , վորոնք հոսում են դեռ ևս տեղից չարժված վայրեր և այնտեղի առանց այն ել անտանելի կացությունը դարձնում կրկնակի անտանելիք : Այսպիսի պայմաններում հասկանալի յէ , վոր ժողովրդական տնտեսությունը պետք է քայլայի բար , խորտակի բար մինչև վերջը : Յեվ իրոք ժողովրդական տընտեսությունը քայլայի եր անտանելի կերպով :

Սակայն հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունը , նրա անտանական շունչնիդը չեր կարող բավարարվել միմիայն «արտաքին Փրոնտում» ջարդեր կաղմակերպելով : Նա այդ պիտի աներ և «ներքին Փրոնտում» : Հայաստանի տերիտորիայում ապրում եր բավական թվով ժահմեդական աղդաբնակություն . դաշանկցությունը ծրագրեր ե կազմում այդ «այլացեղ» աղդաբնակությանը «մաքրել» յերկրի վրայից , իսպառ ընչել նրանց : Հայ բուրժուազիայի տնտեսական-քաղաքական շահն ալդ եր պահանջում : Շուտով անցնում են գործի . դաշնակցական ժառագերիստները և խմբապետները կատարում են իրենց զարելի , ու գործը : Որենքից դուրս հայտարարելով թուրք աղդաբնակությանը՝ նրանք կաղմակերպում են ջարդեր ու շտեսնված թալաններ Շարուրում , Զանգիբարասարում , Բոյուք-Վեդիյում և այլուր : Կոտորում , սպանում , թալանում են թուրք խաղաղ աղդաբնակությանը և ամբողջական դյուչեր , շրջաններ ու գավառներ մոխրակույտերի վերածում : Յեվ հայ բուրժուազիան հրճվում եր սրանով : Յերբ վոր դաշնակ խմբապետները ժտան Բոյուք-Վեդի , ամբողջապես ավերի ու թալանի մտանեցին այն , ստեղծեցին այնտեղ արյան բաղնիս , ահա հենց այդ ժամանակ հայ բուրժուաներից մեկը՝ Աֆրիկանը նոր-Բայազետից մեծ պափոսով հեռագրում եր .

«Անհուն բերկանքով չնորհավորում եմ հայ դորքի փառավոր հաղթությունը . ընկափ Բոյուք Վեդին , վոր մի ամբողջ տարի կապարի ծանրությամբ ձնշում եր հայության սիրտը , վոդին , պատիվը . կեցցե հավերժ Հայաստանի կառավարությունը և նրա կամքն իրագործող հայ բանակը : »<sup>9)</sup>

Ինչ փուլիթ հաստափոր բուրժույին , վոր ավելում եյին գյուղեր ու քղաններ , վոր ստեղծվում եր թշվառների և սովամահների մի հսկա բանակ , վոր յերկրի դրությունը սոսկալի յեր դառնում ու վողջ աշխատավորական մասսան տնքում եր դժոխային կացության մեջ : Չե՞ վոր այս բոլորն արվում եր հայ բուրժուազիայի շահերի , նրա գրպանների համար , չե՞ վոր այդ բոլորը հենց նրա ծրագրներն եյին :

Յեվ այսպես շարունակաբար կոփիներ , անընդհատ պատերազմներ Վաստանի , Աղրբեջանի և Տաճկաստանի դեմ , ջարդեր յերկրի խաղաղ թուրք աղդաբնակության նկատմամբ , կոտորածներ ամենուրեք , դյուչերի , շրջանների ու գավառների ավերումներ , թալաններ և վորպես Ժետեվանք այս բոլորին ժողովրդական տնտեսության քայլայում և գաղթականական հոծ զանդվածների առաջացում :

Սակայն դեռ սրանով չեր վերջանում դրությունը : Կար նաև հիմնական , վճռական նշանակություն ունեցող զանակցական կուսակցության սոցիալ-տնտեսական՝ բուրժուա-կուլակային , կարվածատիրական

անմիջական քաղաքականությունը , մի քաղաքականություն , վորը նույնպես անխուսափելիորեն պիտի հետեւցներ և հետեւցը իրոք աշխատավորական մասսաների , լայն զանդվածների համար դաժան շահագործում , կեղեցում , թալան , թշվառ , ընչարուրկ , գոյության վերջին մնացորդներից զուրկ զանդվածներ , մատնելով նրանց սովի և մահվան կամայականության բախտին և դրանով իսկ դաշնակցական դժոխքի պատկերը կատարյալ դարձնելով :

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՇԱՏԵՍԱԿԱՆ ԴԱՍՏԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցական կուսակցության անվերջ պատերազմների, կոտորածների ու ավերումների բեմ հանդիսացող Հայաստանի բանվորագյուղացիական մասսաների սոսկալի դրությունն ել ալիքի խորանում, սարսափելի, ուղղակի դժոխային եր զանում այդ կուսակցության անմիջական սոցիալ-տնտեսական քաղաքականության հետևանքով։

Դաշնակցական կառավարությունն իր տիրապետության վողջ ընթացքում անմիջական տնտեսական-զասակարգային այնպիսի մի քաղաքականությունն եր վարում, վոր Հայ բուրժուազիան անսահմանափակ կերպով շահագործեր բանվորագյուղացիական մասսաներին, ավելի կուտակեր իր կապիտալները, պահպանվեր կարգաձատերերի, հողատերերի բոլոր իրավունքները, աշխատավորական մասսաների ընչաղրեման, վոչնչացման և արյան գնով ստեղծվեր կարգաձատերերի նոր չերտ՝ մինիստրներից ու «բարձրաստիճան պաշտոնյաներից», ամեն կերպ ունդպակեր զյուզի կուլակներին և կուլ գնային չքավորներն ու ժիջակները։ Ահա այս և յեզել դաշնակցական կուսակցության քաղաքականության իմաստը։ Այս ուղղությամբ և զործել ամբողջ ժամանակ դաշնակցական կառավարությունն իր պարամենում, իր պորտֆելավոր ու անպորտֆել Հայտնի ու անհայտ բազմաթիվ մինիստրներով, այս նոյատակն և հետապնդել դաշնակցական կառավարության վողջ ապարատն իր որենքներով ու վորոշումներով։ Յեվ ի հարկե ուրիշ կերպ ել չեր կարող լինել։ Դաշնակցությունը լինելով բուրժուազի՝ շահագործող գասակարդի կուսակցությունը, բնականաբար իր գասակարդի շահերին համապատասխանող սոցիալ գասակարգային քաղաքականություն պետք է վարեր։ Յեվ նա վարում եր գասակարգային իր այդ քաղաքականությունը շատ հատու ու հստակ կերպով։ տնտեսական, դասակարգային այնպիսի մի քաղաքականություն, վորի մեջ ցայտուն կերպով դրսերում եր այդ կուսակցության ամբողջ ռեակցիոն հակա-չեղափոխական բուրժուակային գեմքը։

Այսպես որինակ, ի՞նչպես եր վճռվում Դաշնակցության տիրապետության ժամանակ հողային Հարցը, աղքարային ինչպիսի քաղաքականությունն եր վարում Դաշնակցությունը։ Կարո՞ղ եր նա արդյոք կալվածատիրական հողերը տալ զյուղացիներին, կարգաձատերերից հողերը խել ու բաժանել Հայաստանի հողագուրի զյուղացիներին, վորոնք կյանքի և մահու կոխվ ելին մղում մի կտոր հող սուանալու համար։ Դաշնակցությունն իհարկե այդպիսի բան չեր կարող անել, նա դրանով Հակասած կիխներ իր սոցիալ-զասակարգային ելությանը։ Նա բնդհակատակն, ամեն կերպ աղահովում եր կարգաձատերերի իրավունքը նրանց հնարավորություն եր տալիս ավելի ևս բնդհարձակելու իրենց կարգաձատերը և անդամ ստեղծում կարգաձատերերի նոր խմբակներ, ինչպես ասացինք, իր բարձրաստիճան պաշտոնյաներից ու մինիստրներից։ Յեվ հոգակուրի զյուղացիությունը համարձակվում եր «կպչել

կարգաձատերերի քեփին» հակառակ դաշնակցական կուսակցության ուժմի ու կամքի և փորձում Հող ձեռք բերել, այնտեղ իսկույն հանգեցների ու մինիստրների իրենց որինքն ասաստում» նրանց։ Այսպես որինակ, 1919 թ. Զարարություն, Կուրթան, Վարդարլուտը և Հարևան միքանի գյուղերի Խան-Աղայանների նախակին ճորտ զյուղացիությունը փորձում և բոնի կերպով խել Խան-Աղայանների կալվածները, ընդարձակածավալ ու արգավանդ դաշտերն ու անտառները։ Վորոշ ժամանակ հողագուրչի գյուղացիությանը հաջողվում և վոմն պրապորչի Անգեր օրոք ողավել Խան-Աղայանների կալվածներից Սակայն շատով «մեծապատիվ» տիկի Վերդինե Խան-Աղայանը և իր գորգի նիկարայ Խան-Աղայանը դիմում են դաշնակցական կառավարության «վահափայլ» ներքին գործոց մինիստրին և գաղափարի կառավարությունն այդ բանն իմանալուն պես խկույն խիստ միջոցներ և ձեռք առնում «վոռվարաք» և «անկարգ» գյուղացիության վեմ, դուքս քում նրանց կալվածներից, հեռացնում իր պաշտոնից կառավարի Անգերին և «աղնվատում» վեհաշուք Խան-Աղայանների բոլոր իրավունքները վերականգնում։

Սակայն կողոպուտներն ու բոնությունները կատարողները միայն  
զորքը և խմբապետները չելին : Այդ ու խայտառակ գործին ամենատկ-  
տիվ կերպով մասնակցում ելին դաշնակցական ամբողջ պետական սպա-  
ռատր : Վամեն տեսակ պաշտոնյաներ, սկսած գյուղական լիազորներից  
մինչեւ պատվարտան մինիստրները, դաշնակ պետական ապարատը՝ վի-  
ցուք հենց վաստիկանությունը, վորը պետք և իրը թե «կարգ ու կանոն»  
ուսեղծեր, ընդհակառակ, նա իր հերթին սանձարձակություններ, բար-  
նություններ ու կողոպուտներ եր կատարում : Այս մասին ներք. զործ .  
մինիստրին նոր-Բայազետից շտապ հեռագրում են :

«Ծրջանում անշխանությունը գնալով հակայական չափերի  
յև հասնում, վաստիկանական իշխանությունն անհանդուրժելի  
վոտնազություններ և կատարում, կաշառակերությունը հոկայա-  
կան ծավալ և ստացել, կատարում են այնպիսի բոնություններ  
և գաղանություններ, վորոնք սուլթանների իշխանությանն մի-  
այն հատուկ են»:<sup>8)</sup>

Հետ չելին մնում, ինչպես ասացինք, դաշնակցական կառավարու-  
թյան բազմաթիվ փոքր ու մեծ պաշտոնյաները, վորոնք կլանում ելին  
աշխատավորական մասսաների վերջին միջոցները : Չենք խոսում այ-  
սեղ առանձնապես դաշնակ մինիստրների և այլ մեծամեծ պաշտոնյա-  
ների անթիվ ու անհամար սարսափելի կերպարանք ստացած զեղծում-  
ների, կաշառակերությունների մասին, վրաովհետեւ նրանք հանրահայտ  
փաստեր են : Բայց ավելուրդ չենք համարում այստեղ մի որինակ ևս  
ըերեւ ցույց տալու դաշնակ պետականության ստորին՝ գյուղական ա-  
պարատների պաշտոնյաների անհամար թալանների ու կողոպուտների  
մասին : «Ժողովուրդ» թերթի թղթակեցը նոր-Բայազետից գրում ե .

«Մեր դաշնակ ժողովրդի գրությունն անտանելի յե և անար-  
խիան հետզետե խորանում ե : Աւրիշ հերպ չեր կարող լինել, վո-  
րովհետե ամեն տեսակ սրաշտոնյաներ, բազմաթիվ լիազորներ  
շարունակ զեղծումներ են կատարում և որինակ տալիս հակա-  
պետական քայլերի : Այսպես ինքնապաշտպանություն կազմ-

7) «Ժողովուրդ» 1919 թ., սեպտեմբերի 29, № 38:

8) Պետ. արթիվ, ներ. գործ. մին. գործ, № 1617

կերպող մի լիազոր, թողած այն դործը, վորի համար ուղարկված է, կատարվում ե գործակալի, հաշտարար գատավորի, հաշտարար միջնորդի, կոմիսարի, ուսիք և այլ պաշտօններ։ Գանդատավորներից ու մեղալորներից «վեչքաշներ են առնում», իսկ սպանություն յեղած դեպքում «արյունի դիներ» վերցնում։ Բարձրաթիվ գողեր տիրոջ աչքի առաջ ծախում են իրեր, բայց աթիվ մարդասպաններ ման են գալիս՝ վոչ մի ուշադրություն դարձնող չկա։ Միայն ամեն ծակից մի լիազոր ե դուրս գալիս և սպանալով ստիպում ե դյուղացուն լծկանը ծախել և դրում ե իրենց շատրը։ «վոր զենք ծախեն նամակաբերին»։ Սկսել ե զանազան խմբերի մուտք գավառ։ ինչ անկարգություններ են առնում այդ «մառվերիստ հյուրերը» ավելորդ և մանրամասն գրել, բավական ե ասել, վոր ժողովուրդը զրված ասում ե ։ առնիկները գան սրանից լավ ե»։<sup>9)</sup>

Յեվ այսպես թալանում, կողոպտում եյին դաշնակ դորքերը, սպաները, խմբապետները, մառվերիստները, վորքը ու մեծ բարձրաթիվ պաշտօնյանները Հայաստանի աշխատավորական մասսաներին։ Բայց այդ թալանների և կողոպտունների հետ միասին հանդես եր գալիս դաշնական դժուքի սարսափներից ամենասարսափելին՝ սիստեմատիկ բնույթ ստացած մարդասպանությունները, ավելի ճիշտ ասած «մարդակերությունք»։ Ամեն որ բուր եր ստացվում դաշնական «դրախտավայրի» ամեն անլունից, թե անհայտ վոճարունները այսքան մարդ են սպանել, այսքան մորթել ու թալանել։ Հայաստանի հանապարհներն ուղղակի սպանդանոցներ եյին դառնել։ Յերբ դյուղացիները այս կտոր այն ճանապարհով վորեւ առեղ եյին փորձում գնալ, նրանց հենց ճանապարհների կիսին մորթուտվում եյին։ Բավական ե հիշել միայն Յերեւան-Աշտարակ, Յերեւան-Եջմիածին, Եջմիածին-Աշտարակ տանող ճանապարհների անպատմելի վոճինները։ Սակայն այդ վոճինները կատարվում եյին վոչ միայն ծայրամասերում, շրջաններում ու ճանապարհներում, այլև հենց կենտրոններում, անգամ հենց «մայրաքաղաքում»։ Ահա դաշնական մի թերթի վկայությունն այդ մասին։

«Դրեթե ամեն որ և ամեն կողմե մեզի կհասնեն գողության, մարդասպանության, թալանի, ծեծի ու բոնությանց լուրեր։ Վաղարշապատի մեջ ներկա ամսույս սկզբին հաշվելով տասն և հինգ որվա ընթացքին տեղի ունեցել ե տասնհինգ մարդասպանության դեպք, այսինքն՝ յուրաքանչյուր որ մեկ հոգի որհվել ե անհայտ ձեռքերում։ Միայն ապրիլի 13-ին տեղի ունեցել ե մարդասպանության չորս դեպք։ Նույն պատկերը հարակից համելումներով և ավելի այլանդակ դույներով գոյություն ունի և մյուս շրջաններում։ Ավելի հետոնները յերթալու պետք ալ չկա։ Ահա Յերեւան, վոր մայրաքաղաքի պատիվ ունի և ուր կապասվեր գեթ, վոր ամեն ժամ և միջոց չի խնայվել անդորրությունը պահպանվելու, կներկայանա քառսային և խոռվատանց վիճակին մեջ։ Դողության դեպքերը ամեն դիշեր և բոլոր անկյունները, սպանություն և վիրավորման դեպքերը հատ հատ իրենքավ։

չնրսով, ծեծ, բռնություն անհանդիւքելի չարծ ու ձեւեր մեր ոչքերը կիսութիվին խորական ժամանակ մը. մարդիկ զիշերները դուրս զալեն կղզուշանան, ժողովի, յերեկութի համափելի կը զախենան, տեսակ մը յերկյուղ, անորոշ անվանահություն մը համակեր և ամենքը։ Պետք կա հիշելու ամեն զիշեր տեղի ունեցող հրացանաձգության մասին, վորոնք յերբեմն ամբողջ քաղաքին մարտադաշտի մը յերեկությունը կուտան։ Անոթիները և սովյալները չեն, վոր կիսութիվն հանրային անդորրությունը։ Դժբախտաբար անոնք գառներու աման վիզներին նման վիզներին ծոած ճաշարանների, փեղկերի առջև կամ փուրին գիմաց մահվան կապասեն արտակարդ անդորրությամբ։ Զարիքը կուշտերեն, չափաղանց շատ հղացածներեն կուգա, չարագործությունը արհեստի վերածող և զեխության ու հափշտակության մոլուցով բռնված ստահակներեն կուգա»։<sup>10)</sup>

Դաշնակ թերթուելը, բացի տիրող դրության մեղմ նկարադիրը տալուց, ստիպված ե անգամ խոսուվանել այն շատ պարզ ու հասկանալի հանգամանքը, վոր այդ բոլոր թալանները, կողոպուաները, ավաղակություններն ու մարդասպանությունները հենց՝ դաշնակների, համփաների, հարուստների, կուշտերի գործն եր, իսկ նրանց այդ «հրաշալիքներն» իրենց ամբողջ ծանրությամբ իշնում եր աշխատավարական մասաների զվիխն, առանց այն ել քայլայման գուռը հասած նրանց տնտեսությունները կործանում վերջնականորեն և բազմահազար շնչաղուրկ, թալանված, կողոպտված, գոյության վերջին մնացորդներից զորկ մասսաներին մատոնում դաժան սովոր մահվան։ Յեվ այսպես, սիստեմատիկ կերպով նախապատրաստվում եր բազմահազար աշխատավորության բնաջնջումը։

Դաշնակցության անվերջ պատերազմները, ջարդերը «այլաղդիների», «մաքրման» բաղաջռիանությունը, համատարած և սիստեմատիկ ընությութ ստացած թալաններն ու կողովուաները Դաշնակցության բուրժուակային անմիջական սոցիալ-տնտեսական բաղաքականությունը-ահա արդ բոլորը միասին հասկանալի յե թե ինչպես պետք եր անդրագանձարին յերկրի և ժողովրդական տնտեսության վրա:

Հնարավո՞ր եր արդյոք գաշնակցական այդ գժուխքում ժողովրդական՝ մասնավորապես աշխատավորական տնտեսության քիչ թե շատ կայուն դրություն: Իհարկե վոչ: Ընդհակառակը, գաշնակցական անվերջ պատերազմների, կողովուաների բուրժուա-կուլակային փողջ քաղաքականության չնորհիվ յերկրի տնտեսությունը կատաստրոֆիկ կերպով գեպի անկում եր գնում: Արդյունաբերությունը գրեթե խսպան բացակայում եր. կործանվել, մոխրակույտի եյին վերածվել կամ թալանվել Հայաստանում յեղած այսպես թե այնպես գործող մի շարք գործարանները: Սարսափելի դրության մեջ եր գանվում յերկաթուղարին հալորդակցությունը և համարյա թե նա կանգ եր առել: Գործությին արխակե թե այնպես միքանի գործարաններ, փորոնց բոլորի ընդհանուր արտադրանքը կազմում եր 1914 թ. արտադրանքի միայն 8 տոկոսը, փաստորեն դաշնակցական Հայաստանում արդյունաբերությունը բոլորովին հորտակվել եր:

Դյուզատնտեսությունն ես իհրակե սրանից լավ չեր կարող լինել: Տնտեսության այս ճյուղում ես մենք տեսնում ենք կատարյալ անկում: Դաշնակցական պատերազմների, պազրումների չնորհիվ ամրողական գյուղեր, վեր եյին ածվել մոխրակույտերի. գյուղատնտեսական վորեկ մշակույթի մասին փորեկ խոսք լինել չեր կարող: Իսկ այն շրջաններում, վորտեղ այսպես թե այնպես հնարավորություն կար ցանել հողերը, այն ել կատարվում եր ամենամինմալ չափով և իհարկե դրույթի կողմից: Այսպես, Սուրմալի գավառում, յերբ մինչև դաշնակցական տիրապետությունը ցանվում եր մոտ 15.000—20.000 գետատին ցորեն, գաշնկացական տիրապետության որով մշակվում եր միայն 1000—1200 դեսյատին:<sup>10)</sup> Կամ Արարանում, ուր առվորական ժամանականերում ցանքերի չսփը հասնում եր 9000 գեսյատինի, դաշնակցական տիրապետության որոք մշակված եր միայն 1000 գեսյատին, կամ վերջապես Ալեքսանդրապոլի գավառը, վոր առաջվա 80.000 գես. ցանքերի գոխարեն ցանքը եր անում միայն 27.000 գեսյատին: Ընդհանրապես դաշնակցական Հայաստանի գյուղատնտեսության պատկերը դրսելու համար իհրենք մի աղյուսակ՝ կաղմացած կենտվիճակը տվյալներից—այդ աղյուսակը տալիս ե մեզ թվեր այն մասին, թե ցանքերի տարածությունը Հայաստանում 1919 թ. ինչպես եր հարաբերվում 1914 թվականի ցանքի տարածության հետ: Ապա ցույց են

առվիս, թե 1919 թ. վորքան ե յեղել անասունների թիվը և վորքան եր 1914 թ. ու վերջապես ցույց ե տալիս թե Հայաստանում գյուղատնտեսական արտադրության վորքան գործիքներ են յեղել 1914 թվականին և վորքան ե մնացել 1919 թվականին:

### ՑԱՆՔՄԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՍՅԱՏԻՆՆԵՐՈՒ

	1914 թ.	1919 թ.	%
1. Հացաբուկսեր	247,766	71,778	29,0
2. Տեխնիկական բուկսեր			
գլխարորապես բամբակ	10,736	584	5,4
3. Կետնախնձոր	6,392	1,691	26,5
4. Ցուղաբեր բուկսեր	4,614	858	16,6
5. Բանջարանոցներ և բուսաններ	3,445	628	18,2
6. Ցանովի խոտ	4,004	175	4,4
7. Բոլոր տեսակի ցանք-			
սերը (ընդամենը)	276,958	75,714	27,3

Այսպիսով Հայաստանում 1919 թ. ցանվում եր ընդամենը 1914 թ. յեղած ցանքերի տարածության միայն 27,3%-ը կամ  $\frac{1}{4}$ -ը. ինչպես անձնում ենք տնտեսությունն ընկել ե կատարողական կերպով: Անասամարդակության մասին թվերը հետեւալ կերպ են խոսում.

### ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

	1914 թ.	1919 թ.	%
1. Զիթ . . . .	51,464	19,862	38,6
2. Վոչխար	1,378,590	405,721	39,0
3. Ալժ . . . .	186,003	65,183	35,3
4. Խոզ . . . .	23,623	5,607	23,7
5. Բոլոր յեղջ. անասուններ	688,594	229,512	33,6
6. Անասունն. ընդ. թիվը	2,364,733	743,643	31,6

Այսպիսով 1919 թ. Հայաստանում յեղած անասունների թիվը կազմում եր 1914 թվականի անասունների թիվ 31,6%-ը կամ մոտավորապես  $\frac{1}{3}$ , մնայած 68,4%-ը կամ  $\frac{2}{3}$  կոտորված եր:

Հետաքրքիլ ե նաև գյուղացիների արտադրության գործիքների մասին յեղած թվերը: Հայտնի յե վոր Հայաստանի գյուղացիների ընդհանրապես աղքատ և հետամնաց եր արտադրության գործիքների անհակետից և չնայած դրան գյուղացիների 1919 թվին 1914 թվին համեմատությամբ կորցրել եր իր արտադրության գործիքների  $\frac{3}{4}$ -ը, մի քանի, վոր իհարկե, չեր կարող կործանարար կերպով չանդրադառնալ ժողովրդական տնտեսության վրա: Արտադրության հիմնական գործիքների մասին թվերը զբությունը հետեւալ կերպ են պատկերում:

10) «Սոցիալիստ-Հեղափոխական» 1919 թ. սեպտ. № 15

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏ. ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՐԾԻՔՆԵՐԸ

	1914 թ.	1919 թ.	% 0/0 նկրության
1. Գութան	17,580	5,293	70
2. Արոր	99,887	22,314	23

Կամ վերցնենք ահա հենց իրեն, դաշնակցական կառավարության Հրատարակած պաշտոնական տվյալները: 1920 թվին դաշնակցական կառավարության այսպես կոչված «անտական ընդհանուր վիճակաղութական դլխավոր բաժնեց» կառավարչիք, ասեցի ֆիլի—Բախչի Խշիանյանի խմբագրությամբ ու ներածությամբ լույս ե տեսնում «Հայաստանի գյուղատնտեսական վիճակակիրը 1919 թ.» վերնադրով մի պիրք, վորտեղ կան հետաքրքիր տվյալները հացահատիկների և կուլտուրական բույսերի մշակման մասին Յերևանի նահանգում: Այդ մասին ասված:

«Հացահատիկների բոլոր տեսակներից ցանվել ե վողջ Յերևանի նահանգում 1919 թվին 4,764,8 դես. մինչդեռ նույն քանակությամբ գյուղերը պատերազմից առաջ կամ 1914 թ. ցանել են մոտ հինգ անգամ ավել, ասել 204,565 դես.: Այդ հաշվով սուցվում է ամեն մի գյուղին 1919 թ. 50,6 դես., իսկ 14 թ. 232,5 դես.: Կուլտուրական բույսերի բոլոր տեսակներից ցանվել ե նույն Յերևանի նահանգում 1919 թ. 1536,5 դես.: 1914 թ. 10730,5 դես.: Բանջարեղենից ցանվել ե 1919 թ. 1602,5 դես. 1914 թ. 5970 դես.»:<sup>2)</sup>

Անամապահության մասին վարչ Հանրապետության մէջ տյդ նույն գրքում հետևյալ թվերն են տրվում: —

«Վողջ Հանրապետության մէջ յեղել են 1919 թ. բնդամենը 738,370 անասուններ, 1914 թվին 3,709,425 կամ հինգ անգամ ավել»:

Բայց ավելի հետաքրքիր են այդ գրքում յեղած այն տվյալները՝ վորոնք վերաբերվում են գյուղական արտադրության հիմնական գործիքների մասին: Ըստ պաշտոնական այդ տվյալների գյուղական արտադրական այդ հիմնական դրածիքները հետեւյալ թվով մն յեղել: —

ՅԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԱՄԵՆ ՄԻ ԳՅՈՒՂԻՆ ԳԱԼԻՍ Ե ՄԻԶԻՆ  
ԾՎԱՎ

Ա. թ ո ր	Գութան	Գերանդի	Մանկադ
1914 թ. 1919 թ.			
128 32 21 8	246 43 789 25		

Նույն նարաբերությունները Դարսի ցըանում

120	19	19	2	194	31	28	7
-----	----	----	---	-----	----	----	---

2) «Հայաստանի գյուղատնտեսական վիճակագրությունը» 1918 թ. ներածությամբ Բայկի Խշիանյանի, Յերևան 1920 թ.

Նույնը Զանգեզուրի գավառում

Ա. թ ո ր	Գութան	Գերանդի	Մանկադ
1914 թ. 1919 թ.			
29 15	9 5	79 11	143 65

Վերջապես ամբողջ Հայաստանում

119	27	19	6	220	37	68	22
-----	----	----	---	-----	----	----	----

Բայց այս բավական չե, խմբագրողի խոսությանությամբ՝ «Գործիքների քանակական նվազման չափն ամբելի ցայտուն որինակներով և արտահայտվում առանձին գավառներում: Այսպես որինակ Ալեքսանդրովի գավառում արորի միջին թիվը (ամեն մի գյուղին) 294 հատից (1914 թ.) իջել է 33-ի (1918 թ.) կամ վերջինս նվազել է ինն անգամ կամ մոտ 800%-ով, գերանդինը նույն զավառում 422-ից իջել է 32-ի կամ նվազել և տաններէք անգամ և կամ ավելի քան 1261%-ով:»

Արտառոց նվազման նույնպիսի որինակներ գտնում ենք նաև մյուս գավառներում, որինակ Նոր-Բայազետում գերանդին նվազել է 533 հատից մինչեւ 70 կամ ավելի քան ութ անգամ: Ղարսի շրջանում նույն գերանդին նվազել է 278 հատից մինչեւ 32 հատ. կամ 8-9 անգամ<sup>2)</sup>:

Այս թվերը չատ բան են ասում իհարկեն, սակայն այնուամենայնիվ դրանք մոտավոր են. այդ թվերը չեն կարող լիովին պատկերացնել այն, ինչ վոր իրոք կար գանակցական տիրապետության ժամանակ: Իրականում դրությունը չատ ավելի վատթար է յեղել: Յեղել են, ինչպես ասացինք, ամբողջ շրջաններ, անգամ գավառներ, վորտեղ և վոչ մի կտոր ցանքս, մշակված հող չի յեղել: Յերկրի տնտեսությունը քայլացմած է յեղել ամբողջ պատճեն, բայց սրանով ևս չեր վերջանում էք գերախուսությունը. այդ բոլորի վրա ավելանում եր նաև մի ժամանակշիռ հանդամանք՝ գաղղթականության խնդիրը: Շնորհի դաշնակցական հայտնի բուրժուատ-կուլակային քաղաքականության, ինչպես մենք այդ տեսնք՝ առաջացել եր բազմահազար տնից-տեղից գոյության վերջին միջներից զուրկ, մերկ և քաղցած գաղղթականական ընտանիքներ, 50 հազար համով վորբերի մի հսկայական զանդված:

Ու այդպիսով ամբողջովին քայլացմած, ապրուստի միջոցներից դրկած ազգաբանկության վրա ավելանում եր 100 հազարավոր մերկ, քաղցած գաղղթական ընտանիքներ, վորոնք Հայաստանի գոյխային գրության պատկերը կատարյալ ելին վարձնում: Յեկ շուտով, վորպես քնական հետևանք, այս բոլորից սկսվում է զաշնակցական գրախառավագության մասնակիցների ֆիզիկական հարաբերությունների մասին գոյությունը: Ակսում եր մի պրոցես, վորն սպասում եր մաքնչացնել Հայաստանի բանտիրա-կան գայությունը: Ակսում եր այն, ինչ վոր վաղուց արդեն նախապատճեն մասին գոյությունը վերջին միջներից զուրկ, մերկ և քաղցած գաղղթականական զանդված:

3) Նույն աեղու

եր ապրում «զաշնակցական դրախտավայրը» թողնենք, վոր այդ մասին խոսեն փաստերը:

1919 թ. նոյեմբերին զաշնակցական «Նոր Հորիդոն» թերթը հետեւ տեղեկությունն և տալիս զաղթականության մասին —

«Յրտերն սկսել են սաստիանալ, զաղթականների դրությունն անհանդուրելի յև դարձել: Ուղղակի սիստեմատիկ կոտորած և տեղի ունենում: Հենց այդ դիւեր միայն Յերևանում 17 զաղթական և մեռել, Եջմիածնում մեռել են 70 հոգի: Ուրիշ կողմերում կացությունն ավելի վատ ե, ցրտին ավելանում են սովոր ու հիվանդությունները: Ուժեղանում ե բծավոր տիֆը: Գաղթականները ծախում են իրենց վերջին շապիկը մի կտոր չոր հաց ճարելու համար: Այսոր առավոտյանից սկսած քաղաքային պարտեզում տեղի յն ունենում զաղթականական միտլնդներ:

«Ժողովուրդը» նույն 1918 թ. նոյեմբերին դրում ե —

«Սոսկալի յին այն տեսարանները, վոր այժմս կատարվում ե Հայաստանի մայրաքաղաքի՝ Յերևանի փողոցներում ու հարպակներում, վիատակներում և մոլիք անկյուններում: Յեղ այդ հուզիչ ու ցնծող տեսարանները կրկնվում են անընդհատ, ցերեկ ու զիւեր և ամենուրեք: Շարան-շարան գաղթականներն անցնում են փողոցից, տնից տուն և աղերսում են մի կտոր հաց. բոլորն ել համարյա կիսամերկ են, բոլորն ել հաղիկ ծածկված են ցնցոտիներով, կեղտի և միջատների մեջ կորած. Հյուծված քաղցածությունից և հիվանդությունից: Շատերը սրանցից դարձել են կատարյալ կմախք և լինում են դեպքեր, յերբ վոմանք մնում են փողոցուած և մեռնում քաղցածությունից՝ անց ու դարձ անողների աչքի առաջ: Վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր սմեն որ փողոցներից ու հարպարակների անկյուններից ժողովում են քաղցած մեռնողների դիմակները: Զդերի տեղ թոկեր պետք ե լինեն, իսկ սրտի տեղ մի կտոր քար, վոր մարդ կարողանա անցնել, այդ սրտածմլիկ տեսարանների մոտով՝ առանց խղճի խայթոցի, առանց խորին հուզմունքի և հոգեկան հեղաշրջման»:

Նույն այդ թերթի գեկոսմբերի համարներում հասպարակված և մի շաղորդագրություն Ալեքսանդրապոլից ներք. դործոց մինխստըության մնունով, վորտեղ ի միջի ոյլոց առլած ե —

«Խնդրում ենք դադարեցնել զաղթականության չարժումը Յերևանից Ալեքսանդրապոլ, զաղթականները քանդում են կայարանները, մեռնում են ճանապարհին, կայարաններում, այրում են կայարանի շնէքերը տաքանալու համար. այսպես այրված և միակ չենքը Կարարութունում: Ալեքսանդրապոլի կայարանի շրջակաքը լցված ե մեռնող զաղթականներով, անկարելի յի զնացքները չարժելու:

Սակայն այս գրությունը իշարեկե միայն զաղթականությանը չի վերաբերում, վոչ ել այդ սահմանափակում եր 1915 թվով, բնդհակառակ, Հայաստանի ամրող աշխատավորական մասսան ևս այդ սարսափելի կացության մեջ եր և դրությունը քանի գնում, այնքան գժոխային եր գտնում: 1919 թվին գրությունը քանի գնում վատանում ե: Մայիսի 17-ին, «Աշխատանք»-ի թղթակիցը Զափարաբատ դյուղից դրում

«Ժողովուրդը կմեռնի. վոչ մի տեղեն հուսա նշույլներ կերեն: Յերեք որվա թաղված մեռեներու միս, փողոցներու վրա վաղորոք ձղած կոչիներու և տրեխներու կտորներ, մուկ, կտուռ, շուն, արադիլ, սովորական կերակուր են դարձած ժողովությին համար: Բերեկ հանդիպեցանք Այնթափ-Քոչկեցի Սարգիս Մանուկյանին, վորը յուր հինդ տարեկան մեռած յերեխայի փորը դատարկած և հեռագրալարը պարանոցած անցուցած թեժ թուրի մեջ կիորով վեր և կուտերը: Նման իրողություններ նոր չեն, և պատահած են Քիալագարին և Մոլլա-Բայազետ գյուղերու մեջ ալ: Բայց դաժան սովոր ամենն շատ արեմտահայ փախստականներու մեջ նիւթանումներ ըրեր ե, յեթե ոգնության միջոցներ չտեղադրվեն՝ միջաւագայնիս զարհությանից գերեզմանոց մը պիտի զառնա չուտով»:

Նույն թերթի նոր-Բայազետի թղթակիցը հունիսի 27-ին (1919 թ.) դրում ե —

«Շըջանս կազմի տնտեսական ծանր ճգնաժամ, մանավանդ վերջին որերս մարգակեր սովոր կհնձե անինա ու ապագա սերունդը կանհետի տակավ: Որական տասնյակներով ու քանյակներով կմեռնին: Խոտակերությունը մեծ չափերի յև հասեր, այս կործանարար հանդամանքը բնականաբար կնպաստե մահցություններու սովարացման: Սովամահներու դիմեկներն ամեն ժամին աշխիդ առջե կտանին գերեզմանոց: Իրեկուն ուշ ատեն, յեր ուժ ունենա այցելելու փողոցները, մայր յեկեղեցու և այլ չենքերու անկյունները, պատի տակերը պիտի տեսնեա տասնյակներով նվազած սովալներ, այլանդակորեն տարածված, վորոնց չեծկտանքը ու աղեխառ լացումները անցողներու վրա անզոր են իրենց ուշագրությունը հրավիրելու:

Եջմիածնի թղթակիցը դրում ե —

«Եջմիածնի և շըջանի դյուղերու մեջ ապրող արևմտահայ և տեղական ժողովրդի ստվար մասը բարիս բովանդակ առումով սովամահ կըլլա, և որեցոր հյուծվելով կմեռնի: Սովոր ստիտեր ե, վոր շատերը ուտեն անսուրը կենդանիներ: Եջմիածնի վանքի և պատառկի մեջ ապրող գաղթականները իրարու ձեռքեն կհափակեն սատկած ձիերու դիմակները: Ճեմարանի ննջարանի հետեւ թունավորված և սատկած շան դիմեկը զաղթական կիները բզիթեր եյին միուր տանելու համար: Փեարլարի 27-ին, առավտարը, գաղթականները շուն մը մորթեցին ուտելու համար: Փեարլարի 28-ին յերեկոյան յերկու կին կատուի մը վիզը կտրեր եյին և կաշին կերեթելին միուր ուտելու համար: Սովորական յերենույթ ե և այն, վոր անտեր կիները իրենց փոքրիկ ծիծիկ յերեխաները կրերեն գաղտնի կձգեն Եջմիածնի վանքի գուան վրա ու կհետանան»:

Եեվ ահա այդ «Մայր աթոռի» պատերի տակ ընկած առվամենների թղթի մասին «Արարատյան աշխատավոր» թերթը հաղորդում ե հետեւապաւ:

«Գաղթականական բաժնի մեռել հավաքող սայլակը անտեր մեռեներ և հավաքել Վաղարշապատում»

Հունվարին	431	դիմակ
Փետրվարին	482	»
Մարտին	618	»
Ապրիլին	334	»

Ընդամենը 4 ամառմ 1865 դիմակ

Հնուագա ամիսների համար նույն այդ Վաղարշապատում՝ «Մայր աթոռի» հովանու տակ մահացածների մասին «Զանդ» թերթի թղթակիցը հետևյալ թվերն եւ տալիս՝

«Վեց ամսվա ընթացքում միայն Վաղարշապատի մեջ մեռած են 3800 դաղթական».

Հունիսին	469	մարդ
Հուլիսին	611	»
Օգոստոսին	706	»
Սեպտեմբերին	547	»
Հոկտեմբերին	672	»
Նոյեմբերին	795	»

Ընդամենը՝ 3.800 մարդ.

Վերջերս որական մեռելներու թիվը՝ 25—30-ի, նույնիւ 40-ի հասավ»:

Վերև հրչած «Արարայան աշխատավոր» թերթի դաշնակցական մի հողվածագիրը թալինի շրջանի Թալին-Մաստարա, Գյուղու, Ղրմըդը, Դաղալու, Մազարջուղ, Մէծ ու Փոքր Թալիներ և Կոչ գյուղերի մասին հողորդում եւ հետևյալ թվերը—

«Ֆաղթից առաջ Թալին գյուղեւ ունեցել եւ 2.200 բնակիչ. այժմ ունի 1250 բնակիչ, այս գյուղում որական մեռնում եւ 8-10 մարդ, ամբողջ գյուղում բացի լիազորի շնից մի շուն չկա, չկա վոչ մի կատու, հասկանալի յեւ թե ինչու, ազգաբնակությունը մերկ է, տների մեծագույն մասը ամայի յեւ ու քանդված»:

Մաստարայում, կամ ինչպես տեղացիներից վոմանք առում են, Թալինի Լոնդոնում, որական մեռնում են 6-8 մարդ.

Գյուղու գյուղը ունեցել եւ 1.100 բնակիչ, այժմ ունի 550 բնակիչ							
Կրմզու	»	1.370	»	»	»	515	»
Դաղալու	»	950	»	»	»	431	»
Մազարջուղ	»	515	»	»	»	225	»
Թալին (մէծ)	»	770	»	»	»	250	»
Թալին (փոքր)	»	70	»	»	»	13	»
Կաշ	»	1.117	»	»	»	650	»

Վերոհիշյալ թվերից պարզում է, վոր Թալինի շրջանի 8 հայկական գյուղերում նախ քան գաղթը յեղել եւ 11. 247 բնակիչ, այժմու կա 5307 բնակիչ, մահացել են 5940 հոգի: Թալինի 8 հայկական գյուղերում որական միջին թվով մեռնում են 60-70

մարդ. յեթև թուլինի հայությանն ամենակարճ ժամանակում ամենամեծ օրարենի ողնություն չհասնի, դուք այստեղի հայության վրա խաչ պետք եւ զնեք»: Յեվ գայթակղիված այդ բոլորց դաշնակցական «միամիտ» թղթակիցը վերջացնում եւ իր հողվածը հետևյալ տողերով՝ «Փափուկ աթոռներու, բազմած պարսներ, ավտոմոբիլով ըջող ընկերներ, բարձրացնուղ պարբանենայք, ճար ունչ՝ ողնության համեր մահի ճիրաններում դալարվող ժողովրդու դիմակ բարձր գույն է գույն այժմյանից դուք ավելորդ եք, մեղ մի խարեք, բավական ե»:

Այսորինակ վաստեր յեղակի չեյին իհարկե, դժոխային զրությունն ընդհանուր եր, վոր ընդդրկել եր ամբողջ Հայաստանը, այսպես որին ընկերության կատարած ցուցակգրության ուրիշ այլ չորս գյուղերի մասին թվերն ասում են.

Գյուղ	նախկին բնակ. թիվ	մնացե են այժմ
Բլուր (Սուրմալ.)	2650	1042
Ղուրդուղուլի (Եղմ.)	1800	800
Անդրդարասան (Եղմ.)	4200	1308
Մալլա-Բայազետ (Եղմ.)	1900	750
Սուրբալույի գավառի գյուղերի մասին «Սոցիալիստ հեղափոխական»-ի թղթակիցը գրում ե»—		

«Փանիկ գյուղը, վոր ունեցել եւ գաղթից առաջ 2500 անձ, մինչեւ մարտի 20-ը մնացել եւ 750 հոգի: Եղջեւարը՝ 2400, մնացել եւ 1050. Թեղըլիյում՝ 1212, մնացել եւ 700. Ալ-Ղամարը՝ 1870, մնացել եւ 862. Ալեթլուսում՝ 1200, մնացել եւ 450: Այսպես նաև մյուս գյուղերը, վերջին յերկու գյուղերն իրենցից ներկայացնում են կատարյալ գերեզմանոցներ, Ալ-Ղամարում տուն, բակ չկա, վոր թաղված մարդ չտեսնի: Գյուղի գերեզմանոցում որս տարվա սովոր մեռածների թիվն ավելի շատ են, քան հարյուր տարվա մտածում: Ալեթլու մտած և միայն 15-20 հոգի վուրքի վրա տեսաւ և այն ել զեմքերն ուսած, մնացածները սովոր պարկած հաց եցին աղերսում»:

Եւդ ահա այդ նույն Սուրբալույի մասին փետրվարի 2-ին 19 թվի «Հառաջ» թերթի թղթակիցը հաղորդում ե»—

«Առվը և համաճարակը կոտորում են ժողովրդին: Շատ աղջերում կերակրվում են կենդանիների և մեռած մարդկանց դիմումներով, Հազարավոր վորքի, անտեր, ճանապարհների վրա մնացնում են կենդանիների աղբով: Հազարավոր զիսկեր անտեր ունեցել են մնացել»:

Ամելի ցայտուն պատմություն եւ անում «Աշխատավոր» թերթում մի ճանապարհորդ աղբի 12-ին, վորը ըրջել եր իզդիրում: Նա պատմում ե»—

«Առաջին աշխատ կերթանք վորբանոցներից մեկը, այստեղ իրարու վրա կուտախած են բարձրաթիվ յերեւաների կմահեցացած դիմուններ. մասնաւոն ձորի մեջ տարութելովող սովորներու նման անհար և կարծել, վոր այդ վորբանոցիներն աղամորդու սերմդին կազմականներ: Գերեզմանոցին մոտիկ եւ այն վորբանոցը: Բժիշկը

մեղ կողատմեն, թե ինչպես գիշերները կերթան նոր թաղված դիակներ զուրս կշանեն և կուտեն: Դուրս կգանք գերեզմանատունը, մարդկային սովերներ կերեան, փորձառու բժիշկը կշասկանա՝ տեսէք արդեն դիակը դուրս կշանեն: Կերթանք այն կողմը Ռարդիկ մեղի կտեսնեն և ծուսի նման կաներւույթանան կողքի ուարտեղների մեջ: Կտեսնենք գերեզմանը՝ կեսը բացված: Բժիշկը մեղ ցույց կուտա ուրիշ գերեզմաններ, վորոնք բացված են, բայց բնակիչներ անհայտացած ե: Կանցնենք կողմնակի փողոցներ, ամեն կողմ թափված են կմախացած մարդկային կերպարաններ, վորոնց մեջ շատերը ուժ չունին նույնիսկ բան մը խնդրելու: Լուրդյան մեջ կըխն իրենց վերջին չունչը: Կմտնենք վորջ մը մեջտեղը վրաքի վրա կեցած և տարիքին ավելի կանուխ ծերացած մարդ մը, վոր անձայն մաղերը կը փետե: Վոտքերին քով պառկած ե դիակ մը հաղիք 18 տարեկան: Մենք սարսափած վուշնչ չելինք կարող ըսել, հուզումը կաեզմեր մեր կոկորդը: Հուզիվ-հազ մարդուն լեզուն բացվեցավ և անբացատրելի կողկողանքով մը ցույց տվակ դիակը և ըսակ «ընտանիքիս տասնութ անդամներն ասիկա վերջինն եր. սա ալ դնաց: Ախ-այն խոտերը տեսէք զուրաը, բակի մեջ, անով կընանվենք. անիկա մերցուց վերջին բայիքս: Կորան բոլորը, ի սեր աստծո մերցուցեք ինձի»:

Կամ ահա «Ժողովուրդ» թերթի թղթակիցը, վոր խմբագրության ասելով մի «արժանահավատ անձնավորություն» Սուրմալույից հայտնում և հետեւյալը:—

«Իմ հարեւանիս տղան՝ իզդիրեցի Հայրապետ Սարդոյանը 33 տարեկան, մեռնում ե սովից, դիակը քաշ տարով դցում են գյուղից դուրս մի այգում: (Ո՞վ ուժ ունի գերեզման փորելու) յերեք որ անցած՝ հարցնում եմ.— «Թաղեցի՞ք արդյոք Հայրապետին, թե դեռ այդումն ե». պատասխանում են ինձ պատի տուրքացից բոլորովին ցամաքած միջանի հոդի թե՝ «Հերը արդեն հոգացել են այդ մասին. հազար յերանի իրեն, վոր մեռավ պըրծավ ես աշխարհի ցավինից, չշանդամը թե չները կուտեն, չոմարդ կը ինչանա»: Հախմերիս զյուղում մի կին թելիցս բռնելով քաշ տվեց ինձ արտաքնօցում սպակած իր յերեխայի մոտ, վորը իր աղտատության միջից նորից ցորենի հատիկները հավաքելով բերանն եր ճգում ու զրանով մնվում: Խզդիրից հորը տանող ճանապարհի վրա մի տիժու ամելի մի ճի յեր սատկել, դիակը չները կերել ելին, չոր վոսկորներն եր մնում: Յերկու 8 և 10 տարեկան տղաներ՝ յերկու յեղայրներ՝ քարերով ջարդում ելին հոտուծ վոսկորները, միջի ուղեղը հանում, ուտում: Որինակները մեկ չեն, տասը չեն, հաղարներ չեն: Վո՞ր մեկը պատմել, վո՞ր մեկը նկարագրել»: («Ժողովուրդ», 19 թ., № 15):

Այս, որինակներ վորքան ուղեք, կարելի յերել, վորովհետեւ սովորել այդ դժոխային կացությունը համատարած եր ամբողջ Հայտառանում: Սակայն այս միքանի որինակները Սուրմալույի մասին բավական ե. տեսներ դրությունը մյուս դափառներում: այսպես որինակ՝ Աւետանդրապովից դյուղացիական միության վարչությունը հեռադրում ե:—

«Գավառում համատարած ոով ե, վոր հնձում ե որական հաղարավոր կյանքեր, հաճախակի հիվանդության գեղքեր են

տեղի ունենում, վոր սպառնում ե փոխվել համաճարակի, սովամահության հոդի վրա: Ամենուրեք աննկարատրելի հուսահատություն ե տիրում: գժգոհություններն ու տրատունչները որ-ավուր ամում են»:

Նոր-հայրադեսից 19 թվի հունիսի 13-ին հեռազրում են:—

«Սովամահությունը գավառում սոսկալի չափերի յե հասել,

Դալի-Ղարդաշ գյուղում մի շաբաթում մահացել են 70 մարդ: Նոր-Ախտայից մայիսի 7-ին հեռազրում են հուսահատորին:—

«Սովեն որական հարյուրավորներ կմեռնին»:

Նույն տեղից հունիսի 1-ին գրում են:—

«Ամրող Ախտա, Յելնովկա շրջանի 40-ի մոտ բազմամարդ գյուղերը կտանվեն համատարած լքումի և բնախնջման նախորյակին: Վերջերս ամեն որ և ամեն գյուղերու մեջ մեռելներու թիվը գալիքորեն բարձրացած ե. կմեռնին բնիկ և փախստական, մասնավորաբար՝ վերջինները»:

Աշտարակից վետրվարի 16-ին հաղորդում են:—

«Փարբիյի և Թաքեալի մեջ բնակվող զվարավորապես արեմահայ փախստականությունը սովեն որական տասնյակներով կմեռնի: Թաղելու հնարավորություններ չկա նույնիսկ»:

Ահա միքանի տեղեկություններ նաև Յերևան քաղաքի մասին, ուր նստում եր դաշնակ-խմբագետական կառավարությունը, ուր ճառում, խոսում ելին «Հայրենիքի, աղդի փրկիչներոր»: Այսպիսս, Հայտնի գաշնակ Վ. Խորենին 19 թ. ապրիլին հեռազրում ե Թիֆլիս «Աշխատավոր» թերթին Յերևանի փողոցներում թափված սովամեռ դիակների մասին հետեւյալը:—

«Քաղաքային տեղեկատուն (բյուլետենը) այսոր հայտարարում ե, — քաղաքում հավաքված ե 25 դիակ, նախորեյին 38 դիակ»:

«Սոցիալիստ-հեղափոխական» թերթը 1919 թվի № 1-ում Յերևանի մասին տալիս ե հետեւյալ տեղեկությունը:—

«Բժշկասանիտարական տվյալների համաձայն Յերևանի փողոցներից հալաքել են դիակներ»

Հուլիս 14-ին՝	23
Հուլիսի 15-ին՝	28
Հուլիսի 17-ին՝	21
Հուլիսի 18-ին՝	20
Ոգոստ. 14-ին	50 և այլն:

Այս թվերը վերաբերվում են բացառապես փողոցներում թափված անտեր դիակներին միայն: Սակայն այդ տեսակետից ել ի հարկե գեռես կասկածելի յե, փորպես պաշտոնական տվյալներ:

«Յամայ տրудա» ժուրնալն իր ժամանակ, 19 թ., պաշտոնական ավանդերի վրա հիմնվելով, 1919 թ. մահացության չափը միայն Յերևանում հաշվեց 14.000 տիկի: Այսինքն՝ միայն մի տարում՝ 1919 թ. Յերևան քաղաքում մահացել են սովոր և տիֆլից 14.000 հոգուց ավել:

Յեզ այսպես սովոր, մահացել համատարած եր, վորը մտնում եր գաշնակների տիրապետության տակ գտնվող ամեն մի անկյուն: Սկսած ամենա-

Հեռավոր ծայրամասներից մինչև կենտրոնը վողջ յերկիրը գալարվում էր սովոր ճիշճաններում: Ահա այս մասին յերբեմնի Սրտ. Գործ. և Մինիստրների Մորհրդի «նախարար» կոչված տիրահաչակ Ալ. Խափիսյանն անգամ ստիպված եր «Հառաջ»-ին հազրուել, թե՝

«Սովոր ե թաղավորում ամբողջ Հայաստանում: Առանց չափանշության որեկան մեռնում են 3000 հոգի: Յերեկ, որինակ. Յերևանում հավաքցին 41 սովամահների դիակներ...»

ՀԱՅ ՀԱՅ ՅԵՎ ՀԱՅ

Դրությունն իրոք, վոր սոսկալի յեւ:  
Ողնեցեք ինչով կարող եք,  
Ողնեցեք քանի ուշ չե՞»:

Կամ ահա այդ նույն գրության մասին նույն «Հառաջ»-ի թղթառ պատճեն ե.

«Հայ ժողովրդի գրությունը յերեք այն աստիճանի ծանր և չուօահատական չի յեղել, վորքան այսոր: Ամբողջ յերկիրը ճգնաժամային մի սոսկաի վիճակ ե ապրում— այդ Հասկացողության ամենալարացակ իմաստով: Մահը համատարած իշխում ե Հայաստանի հորիզոնում, սովոր համատարած և ամբողջ Հայաստանում: Ամեն կողմից միայն մի ճիշ ե լովում «ժողովրդը մեռնում և սովոր»: Յեվ հիրավի, դյուլ չկա, անկյուն չկա, վոր որական 10–20 դոր չտա սովի: Քաղաքներում արդեն զոհերի թիվը միքանի տասնյակների յեւ համառում: Դուրս եք գալիս փողոց և տեսնում եք անթիվ ուրվականներ, նիհար, վոսկրացած, վորոնք կարծես ստվերներ լինեն և հաղիվ են կարողանում իրենք թույլ վոտքերը քաշ տալ: Ի՞նչ պիտի լինի սրա վերջը»:

Նույն այդ թերթի, նույն պատվարժան թղթակիցը փետրվարի 19-ին (1919 թ.) գրում ե.

«Սովորակությունն ուղղակի համաձարակի բնալորություն և առացել՝ այդ բառի ամենալայն հասկացողությամբ: Հարյուր ներով— այս, նույնիսկ հաղարներով մեռնում և հայ ժողովուրդի մեջ մայրաքաղաքում, թե գավառական մեծ քաղաքներում և մեջ զյուղերում: Մարդ սարսահով և նայում ինամատարության մինիստրության տեղեկադրերը (բյուլետենը) Յերևանի մասին, վոր լույս են տեսնում ամեն որ: Միայն մայրաքաղաքի մեջ որական միքանի տասնյակ, յերեմն նույնիսկ, հարյուրավոր մարդիկ են մեռնում սովամահությունից կամ նրա անմիջական ծնունդ տիֆից և այլ զանազան հիվանդություններից: Ավելի տիրուր եր ըքաններից ստացված տեղեկությունները: Գյուղեր կան, վոր ուղղակի գատարեկի են: Տներ կան, փորոնց ոչախոր բոլորովին հանդել ե: Բոլոր գյուղերում առանց բացառության աղղարնակության կեսը— յերեմն նույնիսկ կեսից ավելին բնաջնջվել ե»:

Ահա այսպես եր գրությունը, վոր դաշնակ-շովինիստ «Աշխատանք» թերթը եր «Առվարք» իմբարդականում ստիպված եր արձանագրել—

«Վոչ մի իշխանություն ունենք, վոչ մեկ աշխատանք, վոչ մեկ բարեկամ, սով արքան ե միակ իշխանությունը, վորը կը վաշնացնե ահա մեր ցեղը»:

Ու ապա վերջում դիմում ե իմպերիալիստներին, թե՝

«Հանուն սոված մեռնող հայության՝ մենք կդիմենք ամբողջ մարդկության և ամբողջ գաշնակից պետությանց խզմին, մեռնողի վերջին ճիշերով, աղաղակներով և պահանջելով» մի դավաճանեք մեզ, իրավունք չունեք, հաց տվեք մեզ, անոթի յենք, իմեռնենք»:

Դալիս եր 1920 թ. սակայն իհարկե գրությունը վոչ միայն չեր լավանում, այլ ընդհակառակը վասթարանում եր: Այսպես ահա 1920 թվականին Հայաստանի հեռագրական գործակալությունը հաղորդում ե.

«Արարանի գյուղերում կատարյալ սով ե, ինչպես որինակ Կարանլու, Բաշարարան, Գյողաքլու և այլ ևայլ գյուղերը սննդի պակասությունից տարածված են վարակիչ հիվանդությունները: Ջրկած ամեն ինչից, ազգաբնակությունը կերակրվում ե թեփով և շատ հաճախ գարմանով. բայխումը կատարվում ե անկանոն: Ցրտից, սովից, հիվանդություններից մահացության թիվը հասնում ե որեկան 60-ի: Զրկված գյուղացիության վիճակն աննկանում ե որեկան 60-ի: Զրկված գյուղացիության վագրելի յեւ. անհրաժեշտ է շուտափույթ և լայն ոգնություն: Հակառակ պարագայում ժողովուրդը դատապարտված ե մահակառակ վարագայում»:

Կամ ահա գաշնուցական կենարունական որդան «Հառաջ»-ը իր վաթուն հինգ դիմակ վերնագիր կրող խմբադրականում դրում ե.

«Հունվարի 5-ին Յերևանում, փողոցներից հավաքված ե յերեք զիակ, աներից 10 դիմակ և հիվանդանոցներից 52-ը, ընդամենը 65: Այսպես ե հազորուում փողոցներում փակցված պաշտոնական բյուլետենը: Մի բոսկ փորձեցիք կենորունանալ այս թվերի վրա՝ որական 65 դիմակ միայն մայրաքաղաքում՝ պետության աչքի առջև. հասպա ի՞նչ ե կատարվում գամառում, հետևնակած անկատներում, ամենք մի Դարալադյաղում կամ Նոր-Էայալի ամեն որ գերեզման իշնում հաղարավոր կյանքեր»:

Բերենք նաև մի վերջին որինակ: Հենց նույն թերթի 20 թ. № 5-ում «Հայ ժողովրդի բեկորները մեռնում են» վերնագրի տակ թղթակիցը Ալեքսանդրապոլից գրում ե.

«Ամբողջ 25 հազար ժողովուրդ Պոլիտոնում որեցոր, ժամեթամ իր շարքերն ե նորացնում: Քաղաքի քթի տակ յերկու վերատի վրա համատարած զուրում ե թաղավորում: Սովոր ուղարտություն և մարդկային կյանքերը: Թշվառությունը անմիաբնակի յի: Անցեք Պոլիխոն և տեսնեք. շարան-շարան սարսափելի տեսաբանները մթնագնում են մարդկային գիտակցությունը: Յերիտասարդ կյանքերը՝ մերկ ու քաղցած իրենց վերջին տանջանքն են ապրում կեղտոտ ցնցուիների մեջ: Ամեն քայլափոխում կմախքացած կանանց և ուժապառ մանուկների սըրածմթիկ աղաղակն ե թնդում.—

— Անոթի յենք, անոթի...

— Մեռանք անոթությունից...

— Հիվանդացանք անոթությունից...

— Հաց, փշուր մը Հաց:

Դանտեյի նկարագրած դժոխքի տանջանքների իրականությունն և այդ Պոլիգոնը, վոր այսոր վերածվել և մի սոսկալի սիրտ կտրատող գերեզմանոցի, ուր 25 հազար ժողովրդի բախտի վրա և իսկ իսաչ եղած»:

Եեկ այսպէս 1920 թիվը դառնում եր սովի ու մահվան տարի և այդ համատարած սովի ու քաղցը, մահը, դժոխային կացությունը շարունակվում եր մինչև գաշնակալան տիրապետության վերջին որը, մինչև նրա անկման ժամը և այդպիսով գաշնակալան վողջ տիրապետությունն սկսած առաջին որից մինչև վերջին որը դառնում եր աշխատավորական մասսաների սիստեմատիկ կոտորածների ու ջարդերի մի շբրձան:

Սակայն այդ համատարած սովի ու մահը համատարած եր իհարկե միմիայն աշխատավորական մասսաների համար: Սովից կոտորվում, վոչչանում ելին միմիայն ժողովրդական, աշխատավորական զանդանները, իսկ տնտեսությունը՝ դյուլի կուտակներն ու քաղաքի առևտորականները, ընդհանրապես բուրժուազիան, դաշնակցական թաղանքի բազմաթիվ հերտաները, պաշտոնյաները, ընդհանրապես, հղիքանում երին աշխատավորության արյան դնով, հարստանում ելին և չարունակ քեֆեր սարքում, զգարձանում: Այսպես որինակ, այն ժամանակ, յերբ հենց «Հանրապետության» մայրաքաղաքում՝ Յերևանում որևէ կան փողոցներից հավաքում ելին սովի գոհ միքանի տասնյակ դիսկիներ, յերբ Յերևանի բարձմանադար մասսան գտնվում եր անողոք, գաման տայի ճերանակում, ահա հենց այդ ժամանակ, Յերևանում, ամեն որ սիստեմատիկ կերպով հայ բուրժուազիան, դաշնակ-բազմաթիվ տղերքը սարքում ելին ճոխ իրն ծույղներ ու քեֆեր: Դրությունն այնուել եր հասել, վոր անդամ դաշնակցական թերթի թղթակիցն սովորված եր այդ մասին դրել հետեւյալը.

«Գիշեր չի անցնում, վոր այս քաղաքի մեջ կամ մյուս թաղրում հարրած խմբերը դժոխային աղմուկով, բռալով ու դուռնայի խողային ճողի չանցնեն փողոցներով: Յերեւան կանգնում են փողոցի մեջտեղը և կատաղի հարայ-հրոցով խմում, պարում ու հայհոյում ինչքան ներում են ուժերը: Թակելով զափին ու փշելով խաժամուժ զուրնան: Յերեւան լազաթի համար սկսում են ատրճանակ արձակել, սարասփ գցելով հարևան տներում ապրող կանանց ու յերեխաների որտին: Մարդ մնում է զարմացած, վորտեղից են Յերևանում այսքան շատ քեֆ անողները և ովքեր են այդ հարուստները, վոր ամեն գիշեր խմում են, ամեն որ հազարներ են ծախսում ու չի համում. ովքե՞ր են հաճախորդներն այն վորչերի, զգելի «կրթունների», վորոնցով Յերևանն այնքան հարստացել ե վերջերս: Մի տեղ, ուր ամեն որ մի քանի տասնյակ մարդ ե մեռնում սովից, անբարոյականություն ե, քեֆն ու հարբեցողությունը:»<sup>4)</sup>

Սակայն ի՞նչ բարոյականության մասին խոսք կարող եր լինել: Ի՞նչ փույթ հայ բուրժուազիայի համար մասսաների սիստեմատիկ բնադրն ծումն ու կոտորածը, յերբ նա անդամ այց հանգամանքների նորհիլ իր կաղիտալիներն եր կուտակում, նոր արժեքներ դիզում: Հայ բուրժուազիայի «ականավոր» ներկայացուցիչները, ինչպես որինակ, Մելիք Ա-

զարյանները, Թիֆլիսում և Բագվում ապրող կապիտալիստները վոչիայն սառնասիրո վերաբերմունք ունեյին դեպի Հայաստանի ժողովրդական մասսաները, այլև, զբաղված եին զանազան վայելեներով ու քեֆերով: Այն ժամանակակի յերբ Հայաստանում որեկան մոտ յերեք հագար մարգից ավելի յեր վոչնչանում, որինակ, հենց Թիֆլիսի հայ բուրժուազիան զանազան վարժամաս քեֆեր ու խրախանքներ եր կազմակերպում: Փաստն այնքան ակնաշայ այս բուրժուան անգամ նորից ստիպված երին դրելու, թե —

«Ահա ամիսներ շարունակ բոլորը միաբերան գոչում են. Հայաստանի հայ ժողովուրդը մեռնում է սովից, հացի ու դրամի պակասից: Այս ե ահա մերկ ու դաժան ճշմարտությունը: Սակայն Թիֆլիսի հայ հասարակությունը (այսինքն՝ հայ բուրժուազիան վողիկներու մեջ կառավագանքը Մ.) շարունակում է իր հանցանակությունը: Ավելին: Հղփացած Թիֆլիսը (այսինքն հայ բուրժուազիան Մ.) շարունակում է իր հովտեական վարչելքն ու շվայտանքը: Մեր Հոռմի շարունակում է լուկուլույան իր խնճույքները: Իսկ այնուեղ մեռնում է հայ ժողովրդը: Այսուեղ քեֆը կյանքի միակ նպատակն ու սկզբունքն է: Այսուեղ, սովին ու մահն ե թագավորում ամենուրեք: Հոռմեական բարքերի ու վարքերի տեր Թիֆլիսը (հայ բուրժուազիան Մ.) ցնծում ե Հայաստանի իր հայրենակիցների դիակների վրա: Պատերազմի անբարոյականացման ու վայրենացման աստիթեոզն ե: Վորքան լայն ծավալ ե ընդունում թշվառությունը, վորքան մորեգնում է սովին ու մահության մողոքը, վորքան կաստատորոշիկ ե դառնում Համաձարակը՝ նույնպես ավելի ել սանձարձակ, ավելի կատաղի յեն դառնում որդիաներն ու վակիսանալիսաները մեր Հոռմուների (այսինքն հայ բուրժուազիայի մոտ Մ.):

Այսպորվա որդիստների նշանաբանն ե՝ կեցցե մահն ու քեֆը և նրանք շոայլում են: Քեֆ են անում: Քեֆ ե, քեֆ ու ցնծությունն ամենուրեք: Ուստի և վոչ ժամանակ և վոչ ել տրամադրությունն կա թշվառների, մեռնողների մասին մտածելու»:»<sup>5)</sup>

Իհարկե, ինչպես ասացինք, հայ բուրժուազիան չեր կարող յերեք ժոածել բնաջնջվող մասսաների մասին. չե վոր նա ընդհանրապես հարստություն և կապիտալներ եր դիզում միմիայն այդ նույն աշխատավորների հաշվին, նրա արյան գնով: Մի կողմից աշխատավորական մասսաների սարսափելի կոտորածը սովից և մյուս կողմից հղփացած բուրժուազիայի խրախանքները: Այդ սովի ու մահվան պրոցեսում վոչ միայն չեր տուժում հայ բուրժուազիան, կուլակությունը և զաշնակ բազմաթիվ «հերոսները», այլև նրանք տենդորեն կապիտալներ ելին կուտակում, ավելի ևս հղփանում՝ ոգտվելով հենց համատարած սովից ու թշվառությունից: Կուլակները դյուղում ոգտվելով նաև այս հանգամանքից՝ ավելի և ավելի արագ տեմպով ելին խլում գյուղի աղքատ ազգաբնակության ձեռքերից բոլոր հողերը, անշարժ. ու շարժական ամբողջ կայքն ու գույքերը: Ամենասովորական յերեկույթն եր այն, յերբ զյուղական կուլակը մի ֆունտ կորեկով, ցորենով կամ դարով սովի

5) «Հառաջ», 19 թ. գետրվար 8, («Հայ բուրժուազիան և մեռնող հայ աշխատավորությունը» խմբագանը:)

Նիրաններում թառլարված աշխատավորի ձեռքից վերցնում եր նրա մի կտոր հողն ու այդին, նրա ամբողջ ունեցվածքը: Այդ մասին մենք տեսանք վերեւ:

Յեվ այսպես, մի կողմից մի փոքր խոռն բարդախնդիրները՝ բուրժուաններն ու կուլակներն ավելի ու ավելի եյին հարստանում, կեղեքում աշխատավորական մասսաներին, կապիտալներ կուտակում, խրախճանքներ, ու քեֆեր կազմակերպում: Այդ նրանց գառակարգային տէրապէտությունն եր:

Իսկ մյուս կողմից աշխատավորական զանդվածներ, վորոնք որեւցոր բնաշնչվում եյին որեւկան յերեք հազարից ավելի, մեռնում եյին ամեն տեղ՝ հազարներով: Փողովրդական զանդվածների Փիդիկական գոյությունն ուղղակի վտանգի յեր յենթարկված:

Յեթե շարունակիեր այդ դրությունը, նշանակում եր ամբողջ մասաների վրա ու խաչքաշել: Նշանակում եր, վոր ամբողջ ժողովրդական զանդվածները պիտի կոտորածի և բնաշնչման յնթարկվելին: Յեվ իհարկե բնական ե, վոր այդպիսի կրիտիկական կարուստրոֆիկ մոմենտներին պիտի վոր աշխատավորական մասսաները ձգտելին յելքի: Իսկ այդ միակ յելքը դաշնակցական կառավարության տապալումն ու խորհրդային կարգերի հիմնումն եր: Հայաստանի չխորհրդայնանալը—այդ կնշանակեր բնաշնչել վողջ աշխատավորական մասսաները, այդ կնշանակեր Հայաստանը վերածել անմարդաբնակ մի անապատի: Իսկ ընդուակալը, Հայաստանի խորհրդայնացման գեաքում մասսաները կիրկելին իրենց գոյությունը: Այսպես որինակ նախկին դաշնակցակաների մի խմբակ, խոռված դաշնակցական կենտրոնական որդաններից, 1926 թվին, թավրեղի իր որդանում—«Գաղափար» հանդեսի մեջ այդ մասին ուղղակի ասում եր.—

«Հայաստանի խորհրդայնացումը միակ յելքն եր նրա համար: Մեր կարծիքով հայ բայլշեիկները փրկեցին հայ ժողովրդին Փիդիկական գոչնչացումից: Յեթե բայլշեիկներն իրենց իշխանությունը չստեղծելին Հայաստանում, վոչ վոք չեր կարող յերաշխավորել, վոր Հայաստանի ազգաբնակությունը կարող եր շարունակել իր գոյությունը»:

Այս: Միակ յելքը խորհրդայնացումը, դաշնակցական կառավարության ասպալումն եր: Յեվ այդ յելքին իհարկե պիտի դիմելին ուշ թե չուտ Հայաստանի բանվորական-աշխատավորական մասսաները: Յեվ իրոք, Հայաստանի հեղափոխական բանվորա-գյուղացիական մասսաների մեջ գեռն 1918 թվից սկսվում են հեղափոխական խմբումները, ուղղված դաշնակ-բուրժուակուլակային, խմբապետական կարգերի դեմ, գեռն 1918 թվից սկսած տեղի յեն ունենում բաղմաթիվ հեղափոխական ցույցեր, միտինդներ, յելույթներ, գործադուլներ և ընդհարումներ՝ դաշնակցական կառավարության, նրա խմբապետների դեմ:

Հեղափոխական շարժումները հետզետե աստիճանաբար ավելի ու ավելի ծավալվում, խորանում եյին՝ նախապատրաստելով մայիսյան հերոսական ապստամբությունը, (ապստամբություններ Ալեքսուում, Դարսում, Արթղամիչում, Նոր-Բայազետում, Դիլիջանում, Ղողաբում և այլն) յերե առաջին անդամ կոմունիստական կուտակցության զեկավարությամբ կատարվում է Հայաստանի բանվորության և աշխա-

տավոր գյուղացիության առաջին մեծ մասսայական ազգամայրությունը ուղղված բարժուակային, զաշնակ-խմբապետական զիկտատությունի դեմ: Մայիսյան ապստամբությունը, ուժեղ կերպով ցնցելով դաշնակ պետականության հիմքերը, այնուամենայնիվ, պարտվեց: Բայց այդ պարտությունը ժամանակավոր եր: Մայիսյան հերոսական որերից չափած Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները, վորոնք արդեն մեծ դասեր եյին ստացել, իրենց կոնկ եյին մասմայան ապստամբության մեջ, մի ուժգին հարվածով 1920 թ. նոյեմբերի 29-ին, բայլշեիկայն կուսակցության զեկավարությամբ ու յեղթական կարմիր բանակի ողնությամբ, տապալեցին դաշնակցական պետականությունը, բուրժուակային գիլտատուրան և ստեղծեցին պրոլետարիատի գիլտատուրան, խորհրդային իշխանությունը:

Դաշնակցական տիրապետության որոք սովոր և մահվան դատապարտված բանվորա-գյուղացիական մասսաներն անցան դասակարգային պայքարի ու սոցիալիստական շինարարության վիթխարի աշխատանքներին, վորի չնորիկվ այսոր, նոյեմբերյան հեղափոխության տարեգարձի որը նրանք, վորպես ենոտությատ, հարվածայիններ, հաղթանակորեն կառուցում են սոցիալիզմի հոյակապ չենքը:

Բուռն վողեվորությամբ, անսպառ յեռանդով ու թափով սոցիալիզմի շենքը կերտող բանվորական-աշխատավորական մասսաները չեն կարող այսոր հպարտորեն մի հետազարձ հայացք չդցել Հայաստանի վոչ հեռավոր անցյալի վրա, յերբ տնքում եր նա դաշնակ խմբապետների ու մասների համար գարշապարների տակ, յերբ նա «անձև քառու մոխրակույտ, սպանդ, աշխատավորական դանդվածների անասելի շահագործման, չարդերի, կոտորածների զանտեսական դժոխք եր»:

Այս սկետք ե իմանան, մասնավորապես նոյեմբերյան հեհափոխության 12-րդ տարեղարձին՝ մեր չտեսնված հազմանակների ու նվաճումների ներկա ետապում, վոչ միայն Հայաստանի ենտուգիտատ, սոցիալիզմ կառուցող մասսաները, այյև բոլորը, վորոնք ապրում են Հայաստանի ու վողջ Խորհրդային Միության պրոլետարիատի հերոսական գործով՝ ամբողջ աշխարհում:




## ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻԹԱԿՆԵՐ

Գրքույիւ կարդալուց առաջ անհրաժեշտ և ուղղել Հետհյալ կարեսը վրի-  
պահները։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ցերկու խոսք	42
2. Ինչպես ստեղծվեց դաշնակցական կառավարությունը	3
3. Անվերջ պատերազմներ և ջարդեր	5
4. Դաշնակցության սոցիալ-տնտեսական դասակարգային քաղաքականությունը	12
5. Դաշնակ պետականության «գոհարմները»	22
6. Առև և մահ	35

1. Եջ 9, առզ 26 (վերից) առվաճ և դիալ, պետք և լինի՝ իդեալն.
2. Եջ 12, առզ 17 (ներքից) առվաճ և ամենակարող, պետք և լինի «ամե-  
նակարող»։
3. Եջ 23, առզ 18 (ներքից) առվաճ և զարգային, պետք և լինի հողային.
4. Եջ 24-ի վերջին յերկու տողերը (նոր. 2 ձանոթությունը) պետք է կար-  
դալ առաջ, 27-րդ առզից (անմիջապես ձանոթության դժիգ) Հետո.
5. Եջ 24, առզ 7 (ներքից), առվաճ և Ղազանչեցիք, պետք և լինի Ղազ-  
անցիք.
6. Եջ 26, առզ 4 (վերից) առվաճ և ձանը, պետք և լինի ցածր.
7. Եջ 26-ի 28-րդ առզից (վերից) Հետո անմիջապես պետք և լինի բաժա-  
նակ զիմ, ընդվորում Հաջորդող առզերը պետք և կարդալ վարդես ձանոթու-  
թյուն։
8. Եջ 32-ի 5-րդ առզը (վերից) ամբողջապես պետք և կարդալ 4-րդ առզի  
առեղը, իսկ 4-րդը՝ 5-րդի առզը։
9. Եջ 44, առզ 16 (վերից) առվաճ և առել, պետք և լինի առել և.
10. Գրքույիի մեջ մի քանի առել առվաճ՝ «բուրժուականակային դիկոս-  
տության» արտահայտությունը պետք և լինի «բուրժուական դիկոստության»։



Հայաստակի Ազգային գրադարան



NL0421029

13. 602

ԳԻՒՅ 40 ԿԱՊ. (3/4 Ժ.)



Մ. ԽԵՐՍԻՍՅԱՆ

«ԴԱՇՆԱԿՍԿԻЙ ՌԱЙ» ԱՆ ԾՐԱՆԱ  
ԳՈԼՈԴԱ Ի ԾՄԵՐՏԻ

Գոսիզդատ ՀՀ Արմենիա  
Երևան—1932